ՀՖԿՍՊԻ-ի «Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի ինքնագնահատում՝ ըստ սահմանված չափանիշների և չափորոշիչների

ՉԱՓԱՆԻՇ 1: «Լրագրություն» մասնագիտության կրթական ծրագրի /ՄԿԾ/ համապատասխանելիությունը ՀՖԿՍՊ-ի առաքելությանը, ռազմավարական զարգացման ծրագրին, ՈԱՇ-ի բնութագրիչներին:

Չափորոշիչ ա. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին:	
Հիմքեր	«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագիր (2016-2020 թ.թ.), Հավելված 1.1 Մարզական լրագրության և շախմատի ամբիոնի զարգացման ռազմավարական ծրագիր (2016-2020 թ.թ.), Հավելված 1.2 «Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիր, /նպատակները, խնդիրները/, Հավելված 1.3
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) իր առաքելությունը ձևակերպել է 2016-2020թ.թ. ռազմավարական ծրագրում (**այսուհետ՝ ՌԾ, հաստատված գիտական խորհրդի 25.01.2017 թ. նիստում**): Ըստ առաքելության՝«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը կրթական, գիտահետազոտական և սպորտային բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է ֆիզկուլտուրային կրթության ազգային և միջազգային փորձին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստմանը, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի իրականացման և ուսանողակենտրոն միջավայր ապահովելու միջոցով **մանկավարժական, ֆիզկուլտուրային և սպորտի ոլորտներում** գիտելիքի և արժեքների ստեղծմանը, պահպանմանը և հանրային ոլորտում տարածմանը»: **(Հավելված 1.1,** (**Հավելված 1.2)** ՄՈՒՀ-ում իրականացվող «Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի հիմնական նպատակներն են «անհրաժեշտ գիտելիքի հաղորդմամբ ընդլայնել ուսանողի	

հնարավորությունները՝ ստեղծելու մուլթիմեդիա բովանդակությամբ լրագրողական աշխատանքներ՝ կիրառելով արհեստավարժ լրագրության սկզբունքներն ու նորագույն տեխնոլոգիաները, զարգացնել ուսանողների ընդհանրական մտավոր կարողությունները՝ խթանելով վերլուծելու, գնահատելու, սինթեզելու կոմպետենցիաները»: Դրանց հիման վրա ձևակերպվում են հիմնական խնդիրները, որոնք նախատեսում են կրթական ծրագրի նպատակներին և ելքային պահանջներին համապատասխանող լաբորատոր բազայի և տեխնիկական ծառայությունների զարգացում, ուսումնառության ընթացքում տեխնիկական և այլ ռեսուրսների ու ծառայությունների մատչելիության ու լիարժեք օգտագործման ապահովում: **(Հավելված 1.3, էջ 2-3)** Կրթական ծրագրի նպատակները շեշտադրում են նաև հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցմանն ուղղված մեթոդների մշակումն ու կիրառումը, կրթական ծրագրում շարժունության տարբեր ձևերի ներդրումը, որոշակի ժամանակահատվածով «շարժունության պատուհանի» հնարավորության կիրակումը, մրցակցային միջավայրի վերլուծությունը՝ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների (տեսալսողական, հաղորդակցական, տեղեկատվական և մուլթիմեդիա գործիքներ) օգտագործմամբ: Այս համատեքստում ՄԿԾ-ի նպատակները չեն արտացոլում ՀՖԿՍՊԻ ռազմավարական ծրագրում ամրագրված նպատակները: Ավելին՝ ՄՈՒՀ-ի առաքելության ձևակերպումներում սահմանված են ՀՖԿՍՊԻ-ի հիմնական բնութագրիչները՝ բազմապրոֆիլ բարձրագույն կրթություն, տարածաշրջանային ընդգրկում, դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մոտեցումներ, գիտակրթական գործունեության միջազգայնացում, սակայն ՄՈՒՀ-ի բազմապրոֆիլային լինելը չի երևում ո՛չ բուհի առաքելությունից, ո՛չ էլ հաստատության անվանումից, հետևաբար՝ ՄՈՒՀ-ը ունի հստակ մասնագիտական ուղղվածություն:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ-ին, մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:	
Հիմքեր	Մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը, Հավելված 2.1 Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակի բնութագրչները, Հավելված 2.2 ՄԿԾ-ի վերջնարդյունքների քարտեզագրումը ՈԱՇ-ի հետ, Հավելված 2.3 Դասընթացի ծրագիր, վերջնարդյունքների համապատասխանեցումը ՈԱՇ-ի բնութագրիչներին, Հավելված 2.4
ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքները բովանդակային առումով հիմնականում համահունչ են ՈԱՇ-ի բնութագրիչներին: ՄԿԾ-ի մասնագրում վերջնարդյունքները նկարագրելիս օգտագործվում են այնպիսի ձևակերպումներ, որոնք համահունչ են ՈԱՇ-ի մագիստրոսի մակարդակի բնութագրիչներին /գիտելիքներ, հմտություններ և կարողություններ /կոմպետենցիաներ/: **(Հավելված 2.1, էջ 5-6)**	

ՈԱԾ-ի հետ ՄԿԾ-ի վերջնարդյունքների քարտեզագրման ուսումնասիրությունը վեր է հանում որոշակի անհամապատասխանություններ. ՈԱԾ-ի 7-րդ մակարդակի կարողությունների համատեքստում նշված են «ստանձնել թիմի ռազմավարական նպատակների իրագործումը վերահսկելու պատասխանատվություն և գործել՝ զուգակցելով հայոց ազգային արժեհամակարգն ու պատմամշակութային փորձը համամարդկային արժեքների հետ»: (**Հավելված 2.3)**

Սակայն ՄԿԾ-ի նպատակները չեն նպաստում նշված կարողությունների ձևավորմանը. միայն ՄԿԾ-ի վերջնարդյունքների «Ընդհանրական» հատվածում նշված է. «Իր գործունեությունը կառուցել՝ հիմնվելով համամարդկային բարոյական արժեքների վրա և առաջնորդվելով ազնիվ մրցակցության հղացքի չափանիշներով»: Սակայն նշված վերջնարդյունքը ապահովելու համար առնվազն պետք է այդ մասին շեշտադրել նպատակների կամ առաջադրվող խնդիրների տիրույթում:

Այս չափանիշը ուսումնասիրելիս փորձագիտական խմբին պարզ դարձավ, որ 2018 թվականին վերանայվել է կրթական ծրագրի մասնագիրը, որտեղ տարանջատվել են բակալավրի և մագիստրոսի կրթական վերջնարդյունքները, քարտեզագրվել են կրթական ծրագրի վերջնարդյունքները՝ ըստ առարկաների, ինչը թույլ է տալիս խուսափել ավելորդ դասընթացներից և բացահայտել նոր դասընթացների անհրաժեշտությունը: Առարկաների բովանդակային հաջորդականությունը պահպանված է: Կրթական ծրագրի մասնագրում կրեդիտների բաշխման քաղաքականությունը նկարագրված է, սակայն այն փոխկապակցված չէ վերջնարդյունքներին, քանի որ ուսումնառողների համար նախատեսված ծանրաբեռնվածության, փաստացի ծանրաբեռնվածության և ուսանողներին կրեդիտների շնորհման համեմատական կապերը պահպանված չեն:

Առանձին դասընթացների համար մշակված են առարկայական ծրագրեր, որոնք ներառում են դասընթացների օրացուցային պլանները, դասընթացի թեմաները, ներկայացված է գնահատման սանդղակը, բավարար չափով նկարագրված է դասավանդման, ուսումնառության մեթոդներն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ փոխկապակցումը: Սակայն անհրաժեշտություն կա սահմանել յուրաքանչյուր առարկայի գնահատման չափանիշները/ռուբրիկները և ուսանողներին դրանք հասանելի դարձնել՝ ապահովելով գնահատման թափանցիկությունը: (**Հավելված 2.4)**

ՄԿԾ-ում սահմանված վերջնարդյունքների ձևակերպումներում նկատվել են մի շարք խնդիրներ՝ վերջնարդյունքները որոշ դեպքերում դեկլարատիվ են և ոչ չափելի, ինչպես օրինակ՝ կանխատեսել և իրականացնել սեփական մեդիածրագրերը, կատարել վերլուծություններ հայրենական և միջազգային մարզական լրագրության ոլորտում՝ տարբեր ուղղություններով, գնահատել ցանկացած գերատեսչության կամ կառույցի հասարակայնության հետ կապերի գործընթացը: Վերջնարդյունքները հստակ և մատչելի շարադրելու տեսանկյունից անհրաժեշտություն կա նաև տրամադրել օտարալեզու եզրույթների հայերեն համարժեք տարբերակները, ինչպես օրինակ՝ PR- հասարակության հետ կապեր: Վերջնարդյունքների սահմանման համար ընտրված բայերը՝ ինչպես օրինակ կանխատեսել, ոչ չափելի են կոմպետենցիաների տվյալ մակարդակի ձևավորման համար:

Վերանայման կարիք ունեն մասնագիտական վերջնարդյունքները: Մասնավորապես նշվում է, որ մագիստրոսը ունակ կլինի ձևակերպելու մեդիակառավարման ոլորտի հիմնական սկզբունքները: Ընդգծենք, որ մեդիակառավարման ոլորտի հիմնական սկզբունքները և գործառույթներն արդեն իսկ ձևավորված են և ուսանողը պետք է ունակ լինի կիրառել դրանք, լավագույն դեպքում՝ լրամշակել, համալրել: Բուն մասնագիտական վերջնարդյունքներում նշվում է, որ ուսանողը պետք է ունակ լինի կանխատեսելու և իրականացնելու սեփական մեդիածրագրերը: Առաջարկում ենք ձևակերպել հետևյալ կերպ՝ կանխատեսել սեփական մեդիածրագրերի արդյունքները, իսկ սեփական մեդիածրագիրը ուսանողը կարող է պլանավորել, ծրագրել: Նույն հատվածի 4-րդ կետում նշված է մագիստրոսն ունակ կլինի. «Կատարելու վերլուծություններ հայրենական և միջազգային մարզական լրագրության ոլորտում՝ տարբեր ուղղություններով:» Արդեն իսկ նախադասության սկզբնամասում նշելով մարզական ոլորտը, նախադասության ավարտը դառնում է հակասող: Ըստ ամենայնի պետք էր նշել՝ «. . . ըստ տարբեր մարզաձևերի»: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բակալավրիատի և մագիստրատուրայի մակարդակներում ուսումնառության արդյունքների ձևակերպումները խզվածք չեն առաջացնում կրթության շարունակականության մեջ: **(Հավելված 2.2, ՈԱԾ-ի 8-րդ մակարդակ)**	
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը: դ.ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են ուսումնական միջավայրի ստեղծմանը և ապահովում են ՄԿԾ-ի կրթական բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայի առկայությունը :	
Հիմքեր	«ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգ», Հավելված 3.1 «Կրթական ծրագրի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ», Հավելված 3.2 Մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգ, Հավելված 3.3 «Լրագրություն» մագիստրոսիր կրթական ծրագրի արտաքին գնահատման փորձագիտական կարծիք, Հավելված 3.4 Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություն, Հավելված 3.5 «Լրագրություն» մագիստրոսիր կրթական ծրագրի ուսումնական պլան, Հավելված 3.6 ՄԿԾ-ում ընդգրկված դասընթացների ծրագրեր /քարտեզագրումներ/, Հավելված 3.7 Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ, Հավելված 3.8

	Մարզական լրագրության ամբիոնի 2018-2019 ուսումնական տարվա գործունեության հաշվետվություն՝ ըստ ամբիոնի զարգացման ռազմավարական ծրագրի, Հավելված 3.9 Ուսանողների ուսումնական գործընթացը ապահովող ռեսուրսների և առաջարկվող ծառայությունների գնահատման վերաբերյալ ուսանողական հարցման վերլուծություն, Հավելված 3.9.1 Մասնագիտական կրթական ծրագրերի համեմատական վերլուծության (բենչմարկինգի) քաղաքականություն և ընթացակարգ, Հավելված 3.9.2 Կրթական ծրագրերի բենչմարքինգի հաշվետվություն, Հավելված 3.9.3 ՄԿԾ-ում ընդգրկված դասընթացների ծրագրերի օտարալեզու տարբերակներ, Հավելված 3.9.4

ՄՈՒՀ-ում մասնագիտության կրթական ծրագրի որակի ապահովման գործընթացները նկարագրված են «ՀՖԿՍՊԻ-ի մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգ»-ում, «Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ»-ում**(Հավելված 3.1, Հավելված 3.2)**

«ՀՖԿՍՊԻ մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգում մանրամասն նշված են մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և հաստատման կարգը (բակալավրական և մագիստրոսական), հանգամանորեն ներկայացված են հիմնական երեք փուլերը՝ ծրագրի մշակման արտոնման, ծրագրի փաստաթղթային փաթեթի մշակման և փորձաքննության, փորձաքննության եզրակացությունների կատարման և ծրագրի հաստատման ընթացակարգերը:

Նշված կարգերը նախատեսում են կրթական ծրագրի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և վերանայման գործընթացներում ներքին շահակիցների ներգրավվածությունը: Արտաքին շահակիցների մասնակցությունը ապահովելու նպատակով մշակվել և հաստատվել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգը», որի նպատակն է գնահատել ծրագրի իրականացման որակը, պատասխանատու ֆակուլտետների/ամբիոնների կարողությունը՝ ՄԿԾ–ն իրականացնելու համար սահմանված ծրագրային կողմնորոշիչներին, կրթության ներքին և արտաքին որակի պահանջներին համապատասխան:

Ընթացակարգը սահմանում է մասնագիտության կրթական ծրագրի արտաքին շահակիցների, անկախ փորձագետների ներգրավման հստակ մեխանիզմ, որը փորձագիտական հաձնախմբին հնարավորություն է տալիս ուսումնասիրել և գնահատել ՄԿԾ–ի իրականացման արդյունավետությունը ինչպես փաստաթղթային եղանակով, այնպես էլ Ինստիտուտ այցի միջոցով: Այցի նպատակն է հանդիպումներ ունենալ և տեղում ծանոթանալ ՄԿԾ–ի կիրառմանը, ինչպես ամբողջ բուհի համատեքստում, այնպես էլ՝ ուսանողների, դասախոսների տեսանկյունից: Արտաքին գնահատման արդյունքում կազմված զեկույցում ամբողջացվում են գնահատման եզրակացությունների և բարելավման առաջարկությունների փաթեթը, որը ընդունվում է ի

գիտություն Գիտական խորհրդի կողմից՝ առաջարկված բարելավումները իրականացնելու պայմանով: (**Հավելված 3.3)**

ՄՈՒՀ-ը ամփոփել է արտաքին փորձագիտական մշտադիտարկումները և ներկայամուս իրականացնում է փորձագիտական գնահատումների ընդհանրացումներ, որոնք կողմնորոշելու են կրթական ծրագրի բարելավման աշխատանքները: (**Հավելված 3.4)**

Այս համատեքստում ընթացակարգը ապահովում է ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործընթացներում արտաքին շահակիցների մասնակցությունը:

Կրթական ծրագրի պատասխանատուները որդեգրելով պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում սկզբունքը բոլոր գործընթացների համար, նույն մոտեցումն են կիրառել նաև ՄԿԾ-երի իրականացման և բարելավման ուղղությամբ արտաքին շահակիցների ներգրավման առումով՝ կայուն պարբերականությամբ իրականացնելով ՄԿԾ-ի արտաքին գնահատման գործընթացներ:

ՄՈՒՀ-ում արտաքին շահակիցների ներգրավվածության մեխանիզմ է համարվում նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների, արտադրական պրակտիկաների ղեկավարների կարծիքների ու առաջարկությունների կիրառումը ԿԾ-ների բարելավման գործընթացներում: **(Հավելված 3.5**)

Հանձնաժողովի ներկայացված բարելավման առաջարկությունները ի հայտ են բերում որոշակի խնդիրներ՝ մասնավորապես.

ա/ Քանի որ մագիստրատուրայի կրթական ծրագրով ապագա մագիստրոսից (այս դեպքում՝ մարզական լրագրողից) վերջնարդյունքում ակնկալվում են հետազոտական աշխատանքի կարողություններ ու հմտություններ, անհրաժեշտ է առարկայական նկարագրերում (կրթական ծրագրեր) ներառել թեմայի հետազոտման համեմատական մեթոդը: Ըստ այսմ, ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար շահեկան կլինի հետազոտվող թեման քննել որևէ միջազգային ճանաչում ունեցող համօրինակի հետ համադրական (եթե անհրաժեշտ է, հակադրման) տրամաբանությամբ: Սա հնարավորություն կտա տվյալ թեմային առնչվող հիմնահարցերը դիտարկելու միջազգային ընդունված չափանիշերի համատեքստում՝ ավելի համարժեք դարձնելով ավարտական աշխատանքի գնահատումը:

բ/ Քանի որ միջազգային մարզական լրագրության զարգացման մեջ առկա է նեղ մասնագիտացման միտումը, հարկ է հաշվի առնել մագիստրոսի կոչման հավակնորդի բակալավրական փորձն ու նախասիրությունները: Արդյունքում կունենանք այնպիսի հետազոտող մասնագետներ, որոնք ԶԼՄ-ներում կկարողանան գործել որպես որևէ կոնկրետ մարզաձևի փորձագետներ:

գ/ Հարկավոր է ընդլայնել ապագա մագիստրոսների աշխատանքի գործիքակազմը՝ ավելի մեծ տեղ հատկացնելով մուլտիմեդիոն հմտություններին՝ տեքստի պատրաստում, նկարահանում, խմբագրում, մոնտաժ, տեսաշարի և ձայնի տեղադրում: Հարկ է նշել, որ այս աշխատանքի հիմքերը պետք է դրվեն բակալավրի կրթական ծրագրերում:

ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման համատեքստում վերանայվել են առարկայական ծրագրերը, որոնք քննարկվել են Մարզական

լրագրության և շախմատի ամբիոնում, ապա հաստատվել կրթական ծրագրի պատասխանատու՝ Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետում: Բուհի ուսումնական և Որակի ապահովման բաժինների հետ քննարկումների արդյունքում մշակվել են դասընթացների ծրագրերի ընդհանուր ձևաչափեր:

Հարկ է նշել, որ դասընթացների վերանայված և վերամշակված ծրագրերը ուղարկվել են փորձագիտական կարծիքի: Փորձագետների խմբում ընդգրկվել են մեդիադաշտի փորձառու մասնագետներ, այլ բուհերի Լրագրության ֆակուլտետների դասախոսներ, գործատուներ, ովքեր իրենց առաջարկներ են արել կրթական ծրագրի բարելավման ուղղությամբ: Կարծիքների համար կա սահմանված ձևաչափ, որը ամբիոնին հնարավորություն է տվել կատարել փորձագիտական կարծիքի ընդհանրացված վերլուծություն՝ մատնանշելով դրական միտումները և անհետաձգելի փոփոխությունները:

Իրականացված վերանայումների արդյունքում տարանջատվել են «Լրագրություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ներդրվել են նոր առարկաներ, արդիականացվել և առավել բազմազան են դարձել դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ ներդնելով ուսանողակենտրոն մոտեցումներ, փորձ է արվել փոխկապակցել դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ, ավելացվել են գործնական ժամաքանակները: (**Հավելված 3.6)**

Դրական է, որ ամբիոնը որդեգրել է առաջադրանքների հիման վրա ուսուցումը (teaching on assignment), ինչը նպաստում է մագիստրանտների ինքնուրույնության, գործնական կարողությունների և հաղորդակցահեն հմտությունների զարգացմանը: (**Հավելված 3.7)**

Կրթական ծրագրի մշտադիտարկում իրականացվում է նաև դասալսումների արդյունքների վերլուծության հիման վրա ստացվող տեղեկատվության ուսումնասիրության միջոցով:

Դասավանդման գործընթացի գնահատման արդյունավետությունը բարելավելու նպատակով վերանայվել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ հիմնադրամի դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ»-ը և արմատապես վերափոխվել: (**Հավելված 3.8)**

Կանոնակարգը սահմանում է դասալսման ենթակա դասերի հիմնական տեսակները, դասալսումների նպատակը, դրանց կազմակակերպման և անցկացման հաճախականությունը, դասալսումների արդյունքների վերլուծման ձևաչափն ու մեխանիզմները: Կարևոր դրույթներից է դասալսողների հանձնախմբում հրավիրված արտաքին փորձագետ(ների) և գործատուների ներգրավվածությունը, ինչը թույլ է տալիս դասավանդման գործընթացի բարեփոխումների աշխատանքներում հաշվի առնել աշխատաշուկայի ներկայացուցիչների կարծիքներն ու դիտարկել կրթական ծրագրում անհրաժեշտ փոփոխությունների առաջարկությունները: Նոր կարգի համաձայն դասալսումների կազմակերպման և անցկացման գործընթացի իրականացումը խոչընդոտվել է կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով հեռավար ուսուցման անցնելու հանգամանքով, ինչը թույլ չի տվել լսարանային պայմաններում կատարել դասավանդման և

ուսումնառության գործընթացի արդյունավետության մշտադիտարկումներ, հետևաբար չեն իրականացվել նաև ընդհանրացված վերլուծություններ:

Կրթական ծրագրի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմներն են ուսանողների շրջանում իրականացվող հարցումները, աշխատաշուկայի իրավիճակային ուսումնասիրությունները, հետադարձ կապը մասնագիտական պրակտիկայի ղեկավարներից: Կազմակերպվել են տարբեր ֆորումներ, աշխատաժողովներ՝ մեդիա ոլորտի ներկայացուցիչների, գործատու շրջանակների մասնակցությամբ: Ուսանող-գործատու կապի ընդլայնման նպատակով իրականացված հանդիպումները միտված են եղել ուսանողներին և շրջանավարտներին տրամադրելու աշխատաշուկայում կողմնորոշվելու տեղեկատվության ստացման որոշակի մեխանիզմ: Այս մեխանիզմի հիման վրա հավաքագրված տվյալները ներկայացված և վերլուծված են ամբոնի տարեկան հաշվետվություններում: (**Հավելված 3.9, Ռազմավարական ուղղություն՝ 1. ՈՒսումնական գործընթաց)**

Նմանօրինակ քննարկումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ արտաքին շահակիցների դիտարկումները հիմնականում վերաբերում են բուհական կրթությունը աշխատաշուկայի այժմյան պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության կարևորությանը. գործատուների առաջարկները հաշվի են առնվել առարկայական ծրագրերում՝ ավելացնելով և զարգացնելով գործնական առաջադրանքների հատվածը:

Աշխատաշուկայի պահանջներն հաշվի են առնվել առարակայական ցանկի ձևավորման և դասավանդման գործընթացում: «Ունիվերսալ լրագրության»[1] աշխատաշուկա մուտք գործող շրջանավարտների մրցողունակությունը ապահովելու նպատակով վերանայվել են կրթական ծրագերի վերջնարդյունքները:

Կարևորվել են գործատուների այն շեշտադրումները, որոնց համաձայն լրագրության մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտը պետք է ունենա հետևյալ հատկանիշները՝ մասնագիտական տեսական գիտելիքները գործնականում կիրառելու ունակություն, ստեղծագործական և վերլուծական ունակություններ, անորոշ իրադրություններում արագ կողմնորոշվելու հմտություն, օտար լեզուների իմացություն, ՏՀՏ զարգացող հնարավորությունները մասնագիտական ոլորտում կիրառելու ունակություն: Այս տեսնակյունից ավելացվել են ուսանողների հետազոտահեն կարողությունները զարգացնող դասընթացներն ու դրանց ընթացքում տրվող գործնական առաջադրանքները:

Պրակտիկայի ղեկավարների հաշվետվությունների հիման վրա արված վերլուծումները ցույց են տալիս, որ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն իրականացնելու առումով ամբիոնի համար շարունակում է խնդիր մնալ ուսումնական գործնական միջավայրի ապահովումը: Թեև ամբիոնի դասախոսական կազմի միջոցներով ձեռք է բերվել մեկ տեսախցիկ, խոսափող, եռոտանի և հարակից այլ սարքավորումներ, սակայն դրանց թիվը չի բավարարում ամբիոնի ուսանողական համակազմին: Անհրաժեշտություն կա ստեղծել մարզական

[1]Մեդիաոլորտում ձևավորվել է *կոնվերգենտ նյուզրումը, որի արդյունքում փոխվում է նաև լրագրողի աշխատանքը՝ նրան դարձնելով ունիվերսալ լրագրող, ով պետք է տիրապետի ոչ միայն լավ գրելու, այլև լուսանկարելու, տեսանկարելու, մոնտաժելու հմտություններին:* Աշխատաշուկայի հարափոփոխ մրցակցության մեջ անհրաժեշտ է տիրապետել ունիվերսալ կարողությունների:

հեռուստամեկնաբանության տաղավար, ձայնագրման և մոնտաժային ստուդիա ոչ միայն մագիստրանտների գործնական հմտությունները զարգացնելու նպատակով, այլև ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրում սահմանված առաքելության և կրթական ծրագրով նախատեսված նպատակների արդյունավետ իրականացման համար, որը պետք է դրվի ինստիտուցիոնալ մակարդակի վրա: (**Հավելված 3.9, Խնդիր 1.4)**

Այնուհանդերձ իրականացվել են կրթական միջավայրի արդիականացման որոշակի աշխատանքներ, որոնք նպաստել են Լրագրության մասնագիտության մագիստրանտների ուսումնառության որակի բարելավմանը:

Արդյունավետ կրթական և հետազոտական միջավայր ստեղծելու, այն պահպանելու և բարելավելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի իրականացրած «Կրթության բարելավում» վարկային ծրագրով՝ բուհին տրամադրված Նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում մասնագիտական կրթության արդիականացում և բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2018թ.-ին ինստիտուտում բացվել է գիտահետազոտական կենտրոն, ստեղծվել են լսարաններ, որոնք սարքավորված են էկրաններով և պրոյեկտերներով: Ինտերակտիվ լսարաններից մեկը ապագա մարզական լրագրողների համար ծառայում է իբրև մեդիա-լսարան, որտեղ մագիստրանտները ներբեռնում, մշակում և մոնտաժում են սեփական տեսանյութերը, պատրաստում տաղավարային հաղորդումներ, ուսուցման «շրջված լսարանի» մոդելով կատարում առաջադրանքներ: Փորձագիտական խմբին պարզ դարձավ, որ ներկայումս մեծ թափով իրականացվում են նորագույն սարքավորումներով լսարանների համալրման աշխատանքներ, ինչը կնպաստի ինտերակտիվ, համագործակցային մեթոդներով հագեցած դասապրոցեսի անցկացմանը:

Մասնագիտական կրթության համար անհրաժեշտ գործնական միջավայրի և ռեսուրսների հագեցվածությունից ուսանողների գոհունակությունը պարզելու նպատակով 2019-2020 թ.-ին ինստիտուտի Որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել են ուսանողական հարցումներ: Հարցման արդյունքները ցույց են տալիս,որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են առկա ռեսուրսներից, սակայն մասնագիտական գրականությունը թարմացնելու, քանակն ավելացնելու, լսարանները տեսալսողական սարքավորումներով (պրոյեկտոր, համակարգիչ, ինտերակտիվ գրատախտակ) համալրելու, ինտերնետ հասանելիության լայն հնարավորություն ապահովելու անհրաժեշտություն կա: (**Հավելված 3.9.1)**

ՄԿԾ-ում ընդգրկված դասընթացների ծրագրերի ուսումնասիրությունը բացահայտում է միևնույն դասավանդողի կողմից մի քանի դասընթաց վարելու պրակտիկան, ինչը կարող է ազդել դասավանդման որակի վրա:

Հարցը անհետաձգելի բարելավումների շարքից է, եթե հաշվի առնենք, որ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանների շարունակական բարելավումը ՀՖԿՍՊԻ-ի 2016-2020 թթ. զարգացման ՌԾ-ում նախանշված է որպես առանձին խնդիր:

Լրամշակման փուլում է գիտահետազոտական պրակտիկայի ծրագիրը:

Կրթական ծրագրերի վերանայումները պայմանավորված են լրագրությանան ոլորտի դինամիկ փոփոխություններ հետ, որոնց մասին տեղեկությունները հավաքագրվում են ամբիոնում համատեղությամբ աշխատող դասախոսների միջոցով, ովքեր պրակտիկ գործունեություն են ծավալում ԶԼՄ ոլորտում: Սա մի կողմից հնարավորություն է տալիս տեղյակ լինել աշխատաշուկայի պահանջներին և չտալ միայն վերացական տեսական գիտելիքներ, մյուս կողմից՝ ուսանողների մոտ ձևավորել պրակտիկ հմտություններ ուսանողների մոտ: Դասախոսական անձնակազմի փորձը և դիրքորոշումները հանդիսանում են նաև իբրև աշխատաշուկայում ուսանողներին կողմնորոշելու լավ միջոց:

Մասանգիտական ոլորտում աշխատանքի անցնելու ուսանողների փորձի ուսումնասիրությունը բացահայտում է հետաքրքրական միտում: Թե՛ բակալավրիատի, թե՝ մագիստրատուրայի ուսանողների մեծամասնությունը աշխատանք է գտել ամբիոնի դասախոսների աջակցությամբ, ովքեր ուսանողներին տրամադրել են անհրաժեշտ տեղեկություններ մրցունակ մասնագետներ փնտրող գործատուների վերաբերյալ, նրանց տրամադրել մասնագիտական խորհրդատվություն և սեփական հաջողությունների փորձով խրախուսել իրենց ուսանողներին, ինչը վկայում է ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության մասին:

Ուսումնասիրելով «Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի մշտադիտարկման, գնահատման և վերանայման գործընթացներում ներգրավված շահակիցների շրջանակը՝ նկատելի է, որ ուսումնառողների, շրջանավարտների ընդգրկվածությունը թույլ է, ինչն էլ խոչընդոտում է կրթական ծրագիրը յուրացնողների լիարժեք մասնակցությունը իրենց կրթության կազմակերպման գործընթացին:

Կրթական ծրագրի մշտադիրտարկման ու բարելավման գործընթացներում կարևորվում է բենչմարքինգի իրականացումը. համեմատություն է արվել Բելգիայի «Թոմաս Մուր» համալսարանի Լրագրության ֆակուլտետի Լրագրություն կրթական ծրագրի հետ: ՀՖԿՍՊԻ-ի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարկինգի ընթացակարգը սահմանում է արտերկրի կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու քաղաքականությունը: **(Հավելված 3.9.2)**

2019 թ.-ին ՀՖԿՍՊԻ-ի անցկացրած «Որակի ապահովման ներբուհական համակարգի հիմնախնդիրները և մարտահրավերները» միջազգային աշխատաժողովի շրջանակում Բելգիայի գործընկեր բուհի հետ կնքվել է համագործակցության հուշագիր, որը հնարավորություն է տվել կողմերին իրականացնել համատեղ մեդիահետազոտություններ/ մեդիանախագծեր, կատարել փոձի փոխանակման այցելություններ, ակտիվացնել ուսանողական և դասախոսական շարժունությունը:

Բենչմարքինգի ընթացքում համադրվել են հենանիշ բուհի առարկայացանկերը, կրթական ծրագրի վերջնարդյունքները, գնահատման չափանիշներն ու մեթոդները: Ինչպես նշվում է բենչմարքինգի հաշվետվությունում, այն նպատակաուղղված է էտալոնային (չափանմուշային) բուհի լավագույն փորձի ուսումնասիրմանը՝ ձգտելով տվյալների որակական և քանակական համեմատական վերլուծության հիման վրա բարելավել վերջնարդյունքահեն և ուսումնառողամետ կրթական միջավայրը, խթանել կրթական ծրագրի միջազգայնացումը, ներդնել «շարժունության

պատուհանի» տարբեր ձևեր, նպաստել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետության շարունակական բարելավմանը:
Բենչմարքիգի իրականացման համար ձեռք է բերվել պաշտոնական համաձայնություն Թոմաս Մուր համալսարանի Լրագրության ֆակուլտետի հետ, որի շրջանակում իրականացվել են տեղեկատվության փոխանակումներ, համատեղ քննարկվել են ՀՖԿՍՊԻ-ի կրթական ծրագրի միջազգայնացման խթանման ուղիները, արտագնա և ներգնա շարժունության հնարավորությունները:
Բենչմարքինգի վերլուծության արդյունքները բացահայտել են, որ Թոմաս Մուր համալսարանի բակալավրի (3 տարի) և մագիտրոսի (2 տարի) կրթական ծրագրերի ուսման տևողությունը որոշակի խոչընդոտ է ստեղծում ուսանողական շարժունության ապահովման համար՝ այն դեպքում, երբ ՀՖԿՍՊԻ-ում բակալավրիատում ուսման տևողությունը 4 տարի է, իսկ մագիստրատուրայում՝ 1 տարի: Հետևապես՝ անհամապատասխանություններ են արձանագրվել նաև տարբեր կիսամյակներում իրականացվող դասընթացների և դրանց ավարտին ձևավորվող վերջնարդյունքների մասում, անհրաժեշտ չափով համադրելի չեն նաև դասավանդման և ուսումնառության մեթոդները, գիտելիքների ստուգման և գնահատման ձևերն ու մեթոդները: **(Հավելված 3.9.3, Վերլուծություն, եզրակացություն, առաջարկություն)**
Ընդգծենք նաև, որ Բելգիայի բուհում ուսանողների կրթության համար ապահովված են գործնական բոլոր պայմաններն ու բուհի հարկի տակ գործում են լրագրողական հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ մեդիալաբորատորիաներ: Այս իրողությունը ևս նվազեցնում է կրեդիտների կուտակման և փոխանցման շարժունության ծրագրերի իրականացման հնարավորությունները:
Այս առումով փորձագիտական խումբը ՀՖԿՍՊԻ-ին առաջարկում է միջազգային գործընկերոջ հետ քննարկել հայ ուսանողների համար catch-up courses (վազել և հասնել) դասընթացներ կազմակերպելու ձևաչափը, որը նախադրյալներ կստեղծի կրթական ծրագրի միջազգայնացման համար:
Այունհանդերձ բենչմարքինգի արդյունքների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ կա մեծ հնարավորություն իրականացնելու մասնագիտական պրակտիկայի շարժունություն. պրակտիկայի ծրագրերը համադրելի են, շնորհվող կրեդիտներն ու աշխատածավալը նույն են, ընդհանրություններ կան նաև ակնկալվող վերջնարդյունքների ձևակերպումներում: (**Հավելված 3.9.2,Աղյուսակ 1)**
Հարկ է նշել, որ ռուսերեն և անգլերեն են թարգմանվել դասընթացների ծրագրերը, նախատեսվում է նաև ակտիվացնել կրթական ծրագիրը ամբողջությամբ անգլերենով հասանելի դարձնելու աշխատանքները՝ հիմքեր ստեղծելով ուսանողական շարժունության համար: Հարկ է նշել, որ առարկայական նկարագրերի օտարալեզու տարբերակները մշակվել են 2015 թ-ին, հայալեզու ծրագրերը թարմացվել են 2018 թ-ին, սակայն օտարալեզու տարբերակները չեն նորացվել առ այսօր: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ կա բովանդակային անհամապատասխանություն ՄԿԾ-ում ընդգրկված դասընթացների հայալեզու գործող ծրագրերի և օտարալեզու հասանելի տարբերակների միջև: **(Հավելված 3.9.4)**
Այս համատեքստում շարունակում է խնդիր մնալ օտար լեզուների տիրապետող դասավանդողների կայուն ներուժի ապահովման հարցը, քանի որ մասնավորապես անգլերենին տիրապետող

դասախոսների թիվը մեծ չէ (ամբիոնում դասավանդող 12-ից 4-ն են տիրապետում անգլերենին՝ հաղորդակցության տարբեր մակարդակներով): Վերոգրյալից զատ, դասախոսները փաստում են, որ անգլերենով դասավանդելուն լավագույնս պատրաստվելու համար դեռևս վերապատրաստման և անգլերենի տիրապետման մակարդակը բարձրացնելու կարիք կա:	
Դրական փաստեր	***Բացասական փաստեր***
1. «Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագիրը գտնվում է արդիականացման փուլում՝ մասնավորապես ուսանողակենտրոն դասավանդման մոտեցման կիրառման տեսանկյունից, ինչպես նաև հիմնվելով միջազգային գործընկեր Բելգիայի Թոմաս Մուր համալսարանի հետ ձեռքբերված համագործակցության շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքների վրա: 2. Վերանայվել է կրթական ծրագրի մասնագիրը, տարանջատվել են բակալավրի և մագիստրոսի կրթական վերջնարդյունքները, քարտեզագրվել են կրթական ծրագրի վերջնարդյունքները: 3. Դասավանդման և ուսումնառության մեթոդները ձևակերպված են ՄԿԾ-ում՝ ըստ առանձին վերջնարդյունքների: 4. Անհրաժեշտ որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմով ապահովվածությունը, ուսանողների բավարարվածությունը ՊԴ կազմից: 5. Վերջին տարիներին ՊԴ կազմի համալրումը պրակտիկ ոլորտի գործող մասնագետներով (մարզական հեռուստամեկնաբան, լրատվական գործակալության մարզական բաժնի խմբագիր, մարզական կայքի լրագրող), ինչը նպաստել է բուհ-գործատու կապի ամրապնդմանը, կրթական արդյունքի	1. ՄԿԾ-ի նպատակները ամբողջականորեն չեն արտացոլում ՀՖԿՍՊԻ ռազմավարական ծրագրում ամրագրված նպատակները: 2. Գործող առաքելության և փաստացի գործունեության միջև կապի խզում: 3. Դասավանդման և ուսումնառության մեթոդների և դրանց ներդրման ընտրությունը կանոնակարգված չէ: 4. Դասավանդման և ուսումնառության մեթոդները մեծամասամբ ընդհանուր են բոլոր վերջնարդյունքների համար, չկա մեթոդների տարբերակում ըստ գիտելիքի և հմտության: 5. ՄԿԾ-ում ընդգրկված դասընթացների վերջնարդյունքների ձևակերպումները որոշ դեպքերում դեկլարատիվ են և ոչ չափելի: 6. Կրթական ծրագրի մշտադիտարկմանը, արդյունավետության գնահատմանն ու բարելավմանը միտված տվյալների հավաքագրման մեխանիզմներ կան, սակայն դրանք ամբողջովին ներդրված չեն ՄԿԾ-ի որակի կառավարման գործընթացներում: 7. Ներքին և արտաքին շահակիցների շարունակական ներգրավվածությունը ՄԿԾ-ի վերամշակման և բարելավման աշխատանքներում ցածր է: 8. Դասընթացների մակարդակով գնահատման չափանիշների միասնական մոտեցում չկա:

համապատասխանեցմանը աշխատաշուկայի պահանջներին: 6. Դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ փոխկապակցված են: 7. Որոշակի առաջխաղացում կա անգլերենով առարկայական ծրագրեր մշակելու ուղղությամբ:	9. Դասավանդման և ուսումնառության արդի պահաջներին համապատասխան կրթություն մատուցելու համար մասնագիտական նորագույն տեխնոլոգիաների և կրթական գործնական միջավայրի պակաս կա: 10. ՄԿԾ-ում ընդգրկված միևնույն դասախոսի կողմից մի քանի մասնգիտական դասընթաց վարելու մոտեցման կիրառումը: 11. Գործնականում դասախոսական կազմը դեռևս պատրաստ չէ անգլերենով դասավանդելու համար:

Հիմնական խորհրդատվություն և արձանագրված խնդիրների շտկման առաջարկություններ

1. Մշակել և ներդնել ՄՈՒՀ-ի, ամբիոնի ՌԾ-ների որակական և քանակական գնահատման, ինչպես նաև բարելավման հստակ մեխանիզմներ և գործիքներ՝ ապահովելով դրանց չափելիությունը, ձեռքբերված արդյունքների գնահատումը:
2. Ընդլայնել շահակիցների ընդգրկվածությունը ՌԾ իրականացման գործընթացներում և պարբերաբար վերլուծել շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը:
3. Հստակ ձևակերպել ՄԿԾ-ի մակարդակով (բակալավրի և մագիստրոսի որակավորումների համար) ակնկալվող վերջնարդյունքները և վերանայել դրանց համապատասխանեցումը ՈԱԾ-ին:
4. Մշակել մեխանմիզմներ, որոնցով առանձին դասընթացների արդյունքները կհամադրվեն ամբողջ ՄԿԾ-ի վերջնարդյունքների հետ:
5. Ձեռնարկել քայլեր ՄԿԾ-ում սահմանված կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության նոր և բազմազանեցված մեթոդաբանության մշակման, ներդրման համար, ապա նաև այդ մեթոդաբանության պարբերական գնահատման և բարելավման համար:
6. Ակտիվորեն ներգրավել ներքին և արտաքին շահակիցներին կրթական ծրագրի վերանայման, վերամշակման, իրականացման գործընթացներում:
7. Մշակել և ներդնել չափանիշահեն գնահատման համակարգ յուրաքանչյուր առարկայի համատեքստում:
8. Բարելավել ՄՈՒՀ-ի ուսումնական ենթակառուցվածքները՝ միջոցներ տրամադրելով մեդիալաբորատորայի ստեղծման, նորագույն տեխնոլոգիաների համալրման համար, ինչը հնարավորություն կտա դասավանդումն ու ուսումնառությունը համապատասխանեցնել կրթության արդի պահանջներին:

9. Նվազեցնել միևնույն դասախոսի կողմից բազմաթիվ դասընթացներ վարելու և մեկ դասաժամի ընթացքում տարբեր մասնագիտությունների ուսանողների միաժամանակ դասավանդելու պրակտիկան: 10. Նպաստել ներքին շահակիցների (դասախոսներ, ուսանողներ) օտար լեզվի իմացության բարելավմանը՝ կրթական ծրագրի միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՉԱՓԱՆԻՇ 2: **Կրթական ծրագրում առկա են ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան գնահատման մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:**

Չափորոշիչ ա. Կրթական ծրագրի շրջանակում գործում է ուսանողի գնահատման հստակ քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների և ապահովում է ակադեմիականն ազնվությունն ու ազատությունը:	
Հիմքեր	«Ուսանողների գիտելիքների գնահատման» կարգ, Հավելված 1.1 ՄԿԾ-ում ընդգրկված առարկաների նկարագրեր, Հավելված 1.2 Դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների փոխկապակցումը, Հավելված 1.3 Ակադեմիական ազնվության կանոնակարգ, Հավելված 1.4 Մասնագիտության ընտրության և կրթական միջավայրի բարելավման ուսանողական հարցումներ, Հավելված 1.5 ՄԿԾ-ին ուսումնառողների հետ փորձագիտական խմբի իրականացրած առցանց հարցման վերլուծություն, Հավելված 1.6
ՀՖԿՍՊԻ-ում գործում է ստացած և ցուցաբերած գիտելիքների ստուգման և գնահատման քաղաքականություն, որն արտահայտված է «Ուսանողների գիտելիքների գնահատման» կարգում: **(Հավելված 1.1, էջ 33)** Ինստիտուտում կիրառվում է գնահատման 100 միավորանոց բազմագործոնային համակարգ, որտեղ անցումային շեմը 60-ն է, ամփոփիչ ստուգման արդյունքները արտահայտվում են նաև տառային սանդղակով: Գնահատման համակարգը **(Հավելված 1.1, էջ 38)** վերանայվել է 2017-2018 ուսումնական տարում՝ փոփոխելով անցումայի շեմերի վերջնական գնահատականի ձևավորման բաղադրիչների կշիռները: Բազմագործոն գնահատման գործոնների տեսակարար կշիռների վերաբաշխման արդյունքում 20 միավոր հատկացվել է գիտելիքի գործոնին, հաճախումների գործոնին տրվող կշիռը պահպանվել է (10 միավոր), «ակտիվություն» և «ինքնուրույն աշխատանք»-ը միավորվել են և ձևավորվել է «Անհատական/ինքնուրույն» աշխատանք գործոնը, որին հատկացվել է 20 միավոր: Գոյություն ունեցող գնահատման համակարգը տարբերակում է առարկաներն ըստ ամփոփման և գնահատման ձևերի՝ քննություն և ստուգարք, սակայն հստակ չէ այսպիսի տարբերակման հիմնավորումը: Ներմուծված փոփոխությունները հիմնված չեն կոնկրետ վերլուծությունների վրա: Սա նշանակում է, որ խզվածք կա ՄԿԾ-ի մշտադիտարկման և վերանայման գործընթացների կառավարման և իրականացման ժամանակ ՊԻԳԲ շրջափուլի տարբեր	

փուլերի միջև: Նկատելի է, որ վերամշակումներն իրականացնելիս առանձնապես չի կարևորվել կարիքների վերհանումն ու դրանց վերլուծումը:
Բուհը ունի ուսանողների գիտելիքների գնահատման կարգ, իրականացրել է գիտելիքների գնահատման բարեփոխումների գործընթաց, սակայն խնդիր է այն իրողությունը, որ բոլոր դասընթացների համար վերջնական գնահատականի ձևավորման բաղադրիչների կշիռների նույնականացված են, ինչը կարող է խաթարել յուրաքանչյուր դասընթացի վերջնարդյունքները չափելի դարձնելու գործընթացը: Կանոնակարգված են գնահատման ձևերը, բայց ոչ՝ մեթոդներն ու չափանիշները: Խնդիր է նաև այն, որ գնահատման կիրառվող մեթոդներն առավելապես միտված են գիտելիքի գնահատմանը, քան հմտությունների և կարողությունների: Այս առումով գնահատման հստակ ռուբրիկների ներդրումը կարող է նպաստել գնահատման չափանիշների թափանցիկության և օբյեկտիվության բարձրացմանը՝ առավել հստակ արտացոլելով վերջնարդյունքի ձեռքբերման համապատասխան մակարդակը:
Փորձագիտական ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ մասնագիտության կրթական ծրագրում փորձ է արված կրթական վերջնարդյունքների հետ համապատասխանեցնել գնահատման մեթոդները: Սակայն գնահատման մեթոդների կազմը նույնական և կրկնվող է բոլոր վերջնարդյունքների համար: Մեթոդներն ուղղակի թվարկված են, առանց հստակ կապի ուսումնառության արդյունքի, դասավանդման և ուսումնառության մեթոդների հետ: Արդյունքում այս համապատասխանեցումը չի հանգեցրել գնահատման մեթոդների տարբերակված ընտրության: Առարկայական ծրագրերում և թեմատիկ տրոհումներում կոնկրետ չէ ուսումնառության արդյունքի, ուսուցման և գնահատման մեթոդների միջև համապատասխանությունը:
Խնդիրը պետք է դիտարկել այն տեսանկյունից, որ ՄՈՒՀ-ում մշակված չէ ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն: Դասավանդման մեթոդների ընտրությունը պայմանավորված է դասավանդվող առարկայի առանձնահատկությամբ: Մի կողմից այն իրականացվում է դասախոսի ընտրությամբ, մյուս կողմից՝ այդ փոխկապակցումը գործնականում ապահովելու համար չեն բավականացնում անհրաժեշտ պայմաններն ու տեխնիկական սարքավորումները ուսումնական առարկաների դասավանդման գործընթացը ուսումնառության ժամանակակից պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Մինչդեռ բուհի ՌԾ-ում նշված է, որ ՄՈՒՀ-ի առաքելությունը միտված է ստեղծելու ուսանողակենտրոն կրթական միջավայր: Իսկ ուսանողակենտրոն դասավանդման ժամանակակից մեթոդների ներդրումը բուհի կրթական համակարգում առայժմ բավարար չէ:
Թեև առարկայական ծրագրերում քարտեզագրված է դասավանդման և ուսումնառության մեթոդների փոխկապակցումը ուսումնառության ակնկալվող արդյունքներին և գնահատման մեթոդներին, սակայն համապատասխանեցման մեխանիզմներն ու գործիքները համակարգված չեն, մեթոդները արտացոլող հիմքերը թերի են, հետևաբար չեն հավաստում գործընթացի արդյունավետությունը: Կիրառվող գնահատման մեթոդները ոչ միշտ են համադրելի ակնկալվող արդյունքներին: Այն, որ գնահատման մեթոդների և վերջնարդյունքների

համապատասխանության հիմնավորումը բացակայում է, առաջին հերթին հետևանքն է վերջնարդյունքների ոչ չափելի լինելու, ինչպես նաև վերջնարդյունքների ձեռքբերումները չափելի դարձնող հստակ սահմանված ցուցիչների և չափորոշիչների բացակայության: Արդյունքում առաջանում է խզում գնահատվող ձեռքբերումների և ակնկալվող արդյունքների միջև, և հմտություններն, ըստ էության, չեն գնահատվում: Գնահատման հստակ մեթոդների և չափանիշների համաբուհական մոտեցման բացակայությունը կարող է հանգեցնել տարբեր դասընթացներից ստացված գնահատականների անհամադրելիության և չի արտացոլի շրջանավարտի ձեռքբերումները՝ նվազեցնելով շնորհվող որակավորման արժանահավատությունը:

Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման սկզբունքները շարադրված են այսպես. «Ուսանողների գիտելիքների գնահատման անհրաժեշտությունն է՝ անկախ դասախոսի սուբյեկտիվ կարծիքից», որից հետո սահմանվում են ստուգման ընթացակարգերը: Տպավորություն է ստեղծվում, որ դասախոսական համակազմը «դեմ է» ուսանողների գիտելիքների գնահատման ցանկացած ընթացակարգի կիրառմանը: Ըստ ամենայնի՝ տվյալ հատվածը վերախմբագրման կարիք ունի. տվյալ նախադասությունը ենթարկելով որոշակի փոփոխության կարելի է ներառել նույն ենթավերնագրի 2-րդ պարբերության մեջ:

Հաճախականություն: Ենթաբաժինը գրեթե ամբողջությամբ ունի խմբագրման կարիք՝ մտքերի շարադասական անհամապատասխանության պատճառով: Մասնավորապես, անմիջական իրար հաջորդող այս երկու նախադասությունների միջև չկա իմաստային կապ. «Այդ ամենը կարելի է անցկացնել տարբեր մեթոդներով՝ ճեպազրույցներով, թեստավորումներով, հարցումներով և այլն:» և «Ուսանողը կորցնում է հնարավորությունը սովորելու կիսամյակից կիսամյակ»: Այստեղ բացակայում է գործընթացների ձևակերպման պատճառահետևանքային կապը. հնարավոր է վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Այդ ամենը կարելի է անցկացնել տարբեր մեթոդներով՝ ճեպազրույցներով, թեստավորումներով, հարցումներով և այլն, որի արդյունքում ուսանողը կկորցնի կիսամյակից կիսամյակ սովորելու հնարավորությունը»:

Ընդհանրացնելով «Ուսանողների գիտելիքների գնահատման» կարգում ամրագրված մեխանիզմների ուսումնասիրությունը՝ առանձնացրել ենք որոշակի դիտարկումներ.

ա/ փաստաթղթում կարևորվում է պայքարն արտագրության, գրագողության դեմ, սակայն չեն ներկայացվում դրա իրականացմն մեխանիզմները: Փաստաթղթի մեջ նշվում են գնահատման տարբեր ընթացակարգեր, տարաբնույթ ստուգողական աշխատանքներ՝ անհատական առաջադրանքների կատարում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ռեֆերատներ, մշակումներ, սեմինարներ, լաբորատոր պարապմունքներ, ճեպազրույցներ, թեստավորումներ, հարցումներ և այլն: Սակայն նշված գնահատման չափանիշները չունեն մանրամասն նկարագրություններ: Եթե գնահատման չափանիշը չունի հստակ նկարագրություն, ապա չենք բացառում, որ այս փաստը կնպաստի դասախոսի սուբյեկտիվության դրսևորմանը: **(Հավելված 1.1, էջ 35)**

Առաջարկում ենք նաև հստակեցնել դասընթացի գնահատման «չափանիշներ», «ընթացակարգեր» «չափորոշիչներ» եզրույթները՝ յուրաքանչյուրի համար տալով հստակ սահմանումներ:

Օրինակ, ուսումնասիրելով «Մարզական լրագրության արդի խնդիրները» առարկայի դասընթացի գնահատման բաղադրիչները, կարծում ենք անհրաժեշտ է կատարել հստակեցում. I. II և ամփոփիչ քննությունների համար նախատեսված գնահատման բաղադրիչների նկարագրությունից կարելի է ենթադրել, որ անհատական աշխատանքի արդյունքում գիտելիք չի ստուգվում: (Գնահատման բաղադրիչներն են՝ հաճախում՝ 10 միավոր, գիտելիքի ստուգում 70 միավոր, անհատական աշխատանք՝ 20 միավոր):

ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգում բաց է մնում գնահատականի բողոքարկման հարցը. անհասկանալի է ձևակերպված 3-րդ կետի կապը գնահատման մեթոդաբանության հետ:

Նշենք նաև, որ ՄԿԾ-ի մաս կազմող առարկայական նկարագրերից շատերում բացակայում է գնահատման մեթոդների մասին տեղեկատվությունը, որը հակասում է ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգի էջ 36-ի առաջին կետին: Գնահատման մեթոդների մասին տեղեկատվությունը առկա է միայն Անգլերեն (թարգմանության հիմունքներ) առարկայի նկարագրում: Առարկայական նկարագրերից շատերում կրթական վերջնարդյունքները լայնածավալ են և մասամբ են արտահայտում ՄԿԾ-ի վերջանարդյունքները: Հիմնականում բացակայում են ընդհանրական կոմպետենցիաները: Ցանկալի կլիներ նկարագրերի վերջնարդյունքները լինեին միասնական հասկացություններով, մի մասում առկա է գիտենա, մյուսում՝ իմանա: Բացի այս վերջնարդյունքների գնահատման տեսանկյունից առավել լավ կլիներ առարկայական նկարագրերում կրթական ելքային արդյունքները ներկայացված լինեն ըստ ՄԿԾ-ի կոմպետենցիաների: **(Հավելված 1.2, էջ 13)**

Խնդիր է, որ հստակեցված չէ, թե ինչպես են գնահատվում գործնական և սեմինար աշխատանքները, պրակտիկան, անհատական և խմբային նախագծային աշխատանքները:

Ձևավորող գնահատման (formative assessment) թույլ կիրառումը, ինչպես նաև եզրափակիչ գնահատումների գերակշռող լինելը ՄԿԾ-ում կարող է նվազեցնել հետադարձ կապի միջոցով ուսանողին տրվող անհրաժեշտ ուղղորդումը, խաթարել բուն մասնագիտական կարողունականության գնահատման օբյեկտիվությունը:

Հարկավոր է ընդգծել, որ պրակտիկայի կատարման և ընթացքի որակի համար, ամփոփիչ ատեստավորման համար գործում են գնահատման նույն բաղադիչները: Փորձագիտական խմբի կարծիքով՝ բաղադրիչները ենթակա են վերանայման պրակտիկայի ընթացքում ձևավորվող կարողությունների և հմտությունների գնահատման տարբերակված բաղադրիչների և կշիռների ներդրման տեսանկյունից:

Հավելված 1.3-ում ներկայացված են կրթական վերջնարդյունքների ձևավորմամբ վերանայված դասընթացների («Միջազգային լրագրություն», «ԶԼՄ օրենսդրություն», «ԶԼՄ կառավարում», «Մեդիաշուկայի ուսումնասիրության մեթոդներ») ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները:

Ակադեմիական ազնվության երաշխավորման և գրագողության կանխարգելման գործող մեխանիզմները վերլուծելու նպատակով փորձագիտական խումբն ուսումնասիրել է ՀՖԿՍՊԻ-ի «Ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ը, որը ՄՈՒՀ-ում ներդրվել է 2017թ.-ին: Կանոնակարգում բավականին ընդգրկուն կերպով նկարագրված են ակադեմիական ազնվության դրույթները, սկզբունքներն ու չափանիշները, որոնք հիմնված են «ազնվության, վստահության, օրինականության, սոցիալական արդարության, թափանցիկության, հրապարակայնության, հարգանքի, պատասխանատվության, որակյալ կրթության, կրթություն առանց կոռուպցիայի, կրթությունն ընդդեմ կոռուպցիայի, էթիկայի կանոնների պահպանման հիմնարար սկզբունքների պահպանման վրա»: **(Հավելված 1.4)**

Ակադեմիական ազնվության սահմանումը անհրաժեշտ է ենթարկել տրամաբանական ենթակարգության: Առավել տեղին կլիներ, որ 2.6 կետը սահմանել սկզբում՝ հետևյալ բովանդակությամբ՝ ակադեմիական ազնվությունը պետք է բխի ինստիտուի ռազմավարության և առաքելության նպատակներից:

Փորձագիտական խումբը կարծում է, որ կարգում ակադեմիական ազնվության պահպանման պահանջների իրականացման ժամանակ գրագողության դեմ պայքարի և կանխարգելիչ միջոցառումների համաբուհական ըմբռնումն ու մոտեցումները հստակեցման կարիք ունեն՝ խուսափելով «ազնիվ և պատշաճ պահվածք», «կեղծ պատճառաբանություններ», «անարդար ձևով» ձևակերպումներից:

Ինչպես նաև ակադեմիական ազնվության պահանջները, ըստ փորձագիտական խմբի, պետք է հավասարապես տարածվեն թե՛ ուսանողների, թե՛ պրոֆեսորադասախոսական կազմի վրա, սակայն այստեղ նկատում ենք անհամամասնություն, մասնավորապես ուսանողների նկատմամբ ակադեմիական ազնվության ապահովման պահանջները էականորեն գերազանցում են պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջներին:

Այս համատեքստում կարևոր փոփոխություններից է 2019-2020 ուստարում կիրառվող «Քննական գործընթացի կազմակերպման ընթացակարգը», որը նպատակ ունի օժանդակել ակադեմիական ազնվության պահպանմանը՝ կարգավորելով քննական գործընթացին ուսանողների մասնակցությունը, ծածկագրված քննությունների կազմակերպումը, քննական գործընթացի անմիջական վերահսկումը, բողոքարկումը, գնահատականների հրապարակումը, պատասխանատվությունը: **(Հավելված 1.5)**

Ընթացակարգի համաձայն՝ «Քննասենյակ մտնելիս ուսանողը ներկայանում է ուսանողական տոմսով, ուսանողական տոմսի մոռանալու դեպքում անձը հաստատող փաստաթղթով, որը գրանցվում է քննասենյակի հսկիչի կողմից: Քննության ժամանակ արգելվում է քննասենյակ բերել բջջային հեռախոս, հաղորդակցության հնարավորություններով ժամացույց կամ ցանկացած այլ էլեկտրոնային սարքեր՝ նույնիսկ անջատված վիճակում, փաստաթղթեր»: Ուսանողի մոտ արգելված փաստաթղթերի կամ ցանկացած էլեկտրոնային սարքի առկայությունը, նույնիսկ, եթե դրանք քննության ընթացքում չեն օգտագործվել, համարվում է ընթացակարգի խախտում:

Գովելի են նաև ՄՈՒՀ-ի ջանքերը քննական գործընթացի օբյեկտիվության և թափանցիկության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի բացառման առումով: Խտրական վերաբերմունքի բացառման նպատակով քննական գործընթացի հսկման համար Ինստիտուտը հրավիրում է հսկիչներ, որոնք չեն կարող լինել Ինստիտուտի աշխատակիցներ կամ Ինստիտուտի հետ փոխկապակցված անձիք: Հսկիչներն Ինստիտուտի հետ կնքում են շահերի բախման բացակայության հավաստագիր:

Դրական է, որ սահմանվել է ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ, ձևավորվել է բողոքարկման հանձնաժողով, ուսանողները որպես դիտորդներ կարող են մասնակցել գործընթացին: Ուսանողները ունեն նաև բովանդակային բողոքարկման իրավունք՝ գնահատականների պարզաբանման օրվանից 1 օրվա ընթացքում:

Գնահատման այս համակարգի առավելություններն ու թերությունները վեր հանելու, շտկելու, գնահատման արդյունավետության բարձրացման ուղիներ գտնելու նպատակով կատարվել է նոր քննարակարգի ուսումնասիրություն՝ հարցման միջոցով: Գիտելիքների գնահատման ակադեմիական ազնվության պահպանման տեսանկյունից ուսանողները նշել են, որ նոր կարգը հնարավորություն է տալիս կիրարկել անաչառ և օբյեկտիվ գնահատման մեխանիզմները: **(Հավելված 1.6)**

Գծապատկեր 1.

Խնդրում ենք գնահատել քննությունների անցկացման նոր կարգի և գնահատման համակարգի արդյունավետությունը



ՄԿԾ-ի իրականացման համար պատասխանատու ֆակուլտետն ու ամբիոնը կարևորում են ակադեմիական ազնվության ապահովումը, սակայն ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ մակարդակում պետք է առաջնահերթորեն երաշխավորվի, որ կրթական ծրագրի մակարդակում արդյունավետ կերպով կիրառվում են ակադեմիական ազնվության պահպանման մեխանիզմներ, ինչպես օրինակ համակողմանիորեն ուսումնասիրված չեն ակադեմիական ազնվության դեպքերի բացահայտման մեխանիզմների արդյունավետությունը, բողոքարկումները հիմնականում կատարվել են բանավոր կերպով, ինչը թույլ չի տվել բողոքների առաջադրման հիմքերի վերլուծությամբ հավաստել որոշումների կայացման հիմնավորվածություն ու բարեվարքության միջավայրի ապահովումը:

Ընդգծենք՝ Գրագողության դեմ պայքարը ակադեմիական ազնվության պահպանման առանցքային հայեցակետերից է, ուստի կարևորվում է անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը՝ (համապատասխան համակարգչային ծրագրերի կիրառում) գրագողության դեպքերը բացահայտելու և կանխելու նպատակով, ինչը կնպաստի ակադեմիական բարեվարքության և ազնիվ միջավայրի ապահովմանը: Հարկավոր է նաև գործուն քայլեր իրականացնել ակադեմիական ազնվության վերաբերյալ ուսանողների իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի» ակադեմիական ազնվության կանոնակարգում ներկայացված են ակադեմիական ազնվության և անազնվության վարքագծային դրսևորումները, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, ծնողների գործառույթներն ակադեմիական ազնվության պահպաման և տարածման հարցում:

Հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվության երաշխավորման և գրագողության կանխարգելման գործող մեխանիզմները վերլուծելու նպատակով փորձագիտական խումբը հղում է արել ՀՖԿՍՊԻ-ի Ակադեմիական ազնվության կանոնակարգին: Առավել խորքային վերլուծության համար նպատակահարմար էր դիտարկել բուհում ձևավորված ակադեմիական բարեվարքության մշակույթը: Գաղտնիք չէ, որ հաճախ կրթության ներքին շահակիցների՝ ուսանողների կողմից պարբերաբար դրսևորվում են անազնիվ վարքագծեր, որոնք նվազեցնում են ակադեմիական ազնվության համակարգի արդյունավետությունը:

Այս տեսանկյունից կրթական ծրագրի ուսումնառողների հետ առցանց հարցման շրջանակում փորձագիտական խմբի կողմից փորձ է արվել պարզելու, թե ինչպիսի անազնիվ վարքագծերի են առնչվել կրթության գործընթացի մասնակիցները իրենց գործունեության ընթացքում:

Ըստ հարցումների արդյունքների՝ որոշակի խնդիրներ են ի հայտ եկել բանավոր գնահատումների օբյեկտիվության տեսանկյունից: **(Հավելված 1.7)**

Գծապատկեր 2.



Գծապատկեր 3.



Ձեռքբերված գիտելիքը- 66 %
Գիտելիքը կիրառելու կարողությունները
Ինքնուրույն հետազոտական աշխատանքը-66%
Հաճախումները դասաժամերին-33 %
Ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքը-0%
Ուսանողի ծանոթը-0%
Ծնողների դիրքը-0%
Կաշառքը-0%

Ընթացիկ գնահատումների վերաբերյալ առցանց հարցմանը մասնակցած մագիստրանտները նշել են, որ գնահատումների ժամանակ կարևորվում է ***ձեռքբերված գիտելիքը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը,*** **(Հավելված 1.7 Գծապատկեր 8,9)** ինչպես նաև՝ հաճախումը դասերին: Հետաքրքրական է, որ մագիստրոսի կրթական ծրագրում ներկայացված գնահատման համակարգում սահմանված չէ հետազոտական բաղադրիչի և կշիռի կիրառումը, սակայն դասախոսները դասավանդման, ուսումնառության և գնահատման պրակտիկայում առանձնացնում են հետազոտական աշխատանքի արդյունքում ձևավորված կարողությունների գնահատումը:

Գծապատկեր 4.



Գնահատման չափանիշները հնարավորություն են տալիս դրսևորելու ձեռքբերած գիտելիքները- 33, 3%
Գնահատման արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր անգամ դասախոսից ստանում եմ կարծիք կամ խորհուրդ-33,3%

Մագիստրանտների հետ փորձագետների անցկացրած առցանց հարցազրույցի ընթացքում դիտարկվել են անազնիվ վարքագծերը: Տեսաքննարկման մասնակցում էին ընթացիկ ուսումնական տարվա 3 մագիստրանտ և 7 շրջանավարտ (ըստ՝ վերջին 3 ուսումնական տարիների): Հարցազրույցի մասնակիցների մատնանշած բարեվարքության խախտումները միավորվել ակադեմիական անազնվության հետևյալ տեսակներ մեջ: Դրանք են՝

- ✓ Արտագրություններ, ուրիշի հեղինակային նյութերի օգտագործում՝ հղումները ոչ բոլոր դեպքերում են տրամադրվում:
- ✓ Արտաքին վճարովի ծառայություններ օգտագործելը (թեզերի, հետազոտական առաջադրանքների համար):
- ✓ Ավագ տարիքի ուսանողներից օգնություններ ստանալը (նրանց կողմից կատարված առաջադրանքներ ձեռք բերելը և իբրև սեփականը ներկայացնելը):
- ✓ Հետազոտական թիմային աշխատանքների ժամանակ թիմի մի անդամի կողմից կատարված աշխատանքը իբրև սեփականի ներկայացում

Նշենք, որ ՀՖԿՍՊի-ի գործող կանոնակարգում նկարագրված չեն ակադեմիական անազնվության այս երևույթները նվազեցնելու և վերացնելու մեխանիզմները, ինչը կարող է հանգեցնել դասախոսի հետ համաձայնության գալու փորձերի:

Իրատեսական լուծումներից կարող է լինել ակադեմիական անազնվության կանխարգելման չափանիշների, չափորոշիչների ու կանոնակարգերի ներդրումը նախ ակադեմիական ազնիվ մշակույթի ձևավորման նպատակով, ինչպես նաև սահմանելու պատժամիջոցներ անազնվությունների դրսևորման դեպքում:

Ինչպես փորձագիտական զեկույցի **Խնդիր 2-ի ա./-ում** ենք նշել, բարեվարքության օբյեկտիվ մեխանիզմների ներդրման տեսանկյունից բուհում որոշակի քայլեր ձեռնարկվում են: Քննական գործընթացի կանոնակարգմամբ վերահսկվում են ակադեմիական կանխատեսելի անազնիվ վարքագծերը և դրանց հանդեպ պատժամիջոցների կիրառումը՝ նախապես սահմանված կարգով:

Այս քայլերը կարևոր են, քանի որ դրանք բավականին արդյունավետ կարող են լինել թե՛ կրթության որակի բարձրացման, թե՛ ուսանողների սովորելու մոտիվացիայի աճի տեսանկյունից:

ՉԱՓՈՓՈՇԻՉ բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ:	
Հիմքեր	Կրթական ծրագրի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման կարգ, Հավելված 2.1 Դասընթացի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցում, Հավելված 2.2 «ՀՖԿՍՊԻ»-ի հիմնադրամի խորհրդատուների գործունեության կանոնակարգ, Հավելված 2.3 Պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանման, գնահատման հարցման արդյունքների վերլուծություն, Հավելված 2.4 Ամբիոնի դասախոսի մասնագիտական կոմպետենցիաներին ներկայացվող պահանջներ, Հավելված 2.5
ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մի շարք մեխանիզմներ: Իրականացվում են դասընթացների դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցումներ: Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ ուսանողները կարևորում են գործնական բաղադրիչի ամրապնդումը կրթական ծրագրում, արտերկրում կրթությունը շարունակելու հնարավորությունների դյուրինացումը, պրակտիկ ոլորտի մասնագետների ընդգրկումը կրթական ծրագրում ն ևս ուսանողների բարձրաձայնած հարցերից է: **(Հավելված 2.2, էջ 26)** ՄՈՒՀ-ը մշակել է դասավանդման և ուսումնառության գործընթացների բարելավման, գնահատման մեխանիզմների նախագծային փաստաթղթեր, որոնք սակայն թվագրված և հաստատված չեն: Սա վկայում է այն մասին, որ այդ մեխանիզմները դեռևս չեն գործում և հետևաբար չեն կարող նպաստել ՄԿԾ-ի արդյունավետ իրականացմանը, ինչը նաև հնարավորություն չի տալիս տեսնել տարբեր գործողությունների միջև կապը: Այս հանգամանքը կարող է խաթարել ՄԿԾ ընթացիկ մշտադիտարկումների և վերանայումների մեխանիզմի արդյունավետ կիրառումը: Բավարար հիմքերի վրա է դրված ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվությունների տրամադրումը՝ նպաստելով, առհասարակ, ուսումնառության արդյունավետության ապահովմանը, քննաշրջանին ուսանողների լավագույնս նախապատրաստմանը: Իբրև ակադեմիական աջակցության ամրապնդման կոնկրետ մեխանիզմ՝ իրականացվում են ուսանողների խորհրդատվություններ և գնահատման համակարգին վերաբերող ուսանողների բարձրաձայնած խնդիրների լուծման նպատակով հանդիպումներ ինչպես համապատասխան գրաֆիկով, այնպես էլ ըստ նախնական պայմանավորվածության: **(Հավելված 2.3)**	

Որպես մեխանիզմ կիրառվում են ամբիոնի վարիչի, դասալսողների հանձնաժողովների դասալսումները: Իրականացված դասալսումների անցկացման և արդյունքների վերլուծումները հիմնականում արձանագրային բնույթ են ունեցել, որտեղ դասալսումների պլանավորումը թողնված է ամբիոնների վարիչների հայեցողությանը՝ ում մոտ և ինչ հաճախականությամբ իրականացնել դասալսումներ: Դասալսումների արդյունքները ներկայացվել են արձանագրության ձևաչափով, որտեղ ըստ մշակված բաղադրիչների (առարկայի իմացություն, դասավանդման մեթոդներ, ուսանողների հնչեցրած հարցերի թիվը, դրանց բնույթը) նշվում են դիտարկումներ, առաջարկվում բարելավման ուղիներ: Կանոնակարգված չեն դասալսումների գնահատման չափորոշիչները, բացակայում են դասալսումների արդյունքում վերհանված խնդիրները, արձանագրություններում ձևակերպումները կրկնվում են: Ավելին՝ իրականացված դասալսումների արդյունքները չեն վերլուծվել, նպատակային չեն կիրառվել, հետևաբար գործնական քայլեր չեն ձեռնարկվել վերհանված թերությունների շտկման ուղղությամբ: Հաշվի առնելով արձանագրված խնդրահարույց իրողությունը՝ դասալսումների մեխանիզմը ուժեղացնելու նպատակով ՈԱԲ-ի առաջարկով վերանայվել է դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգը: Վերամշակվել և ՀՖԿՍՊԻ-ի Գիտխորհրդի որոշմամբ հաստատվել է կանոնակարգի լրամշակված տարբերակը, որում ներկայացված են դասալսումների արդյունքների գնահատման չափանիշները /գնահատման մատրիցա/: Այդ գնահատումների հիման վրա նախատեսվում է իրականացնել դասախոսների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտ միջոցառումներ: Նախորդ երեք տարիներին իրականացված մասնագիտական վերապատրաստումների արդյունավետությունը պարզելու նպատակով իրականացվել է հարցում դասախոսական կազմի շրջանում: Եվ ինչպես արդյունքներն են ցույց տալիս, դասավանդողները մասնագիտական վերապատրաստումների ակտիվացման և դրանց արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն են առաջ քաշում: **(Հավելված 2.4, Գծապատկեր 3.2, 3.3, 3.4, 3.5, 3.6)** Կրթական ծրագրի արդյունավետության ապահովման նպատակով սահմանված են նաև դասախոսական կազմի կոնպետենցիաներին ներկայացվող պահանջներ, սակայն առկա չեն ամրագրված պահանջներին համապատասխանությունը երաշխավորող կամ հավաստող ուսումնասիրություններ: (**Հավելված 2.5)**	
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ***ՄԿԾ-ն զարգացնում է ուսանողի ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:***	
Հիմքեր	Մագիստրոսական թեզի պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման կարգ, Հավելված 3.1 Մագիստրոսական թեզերի ուսումնասիրություն, Հավելված 3.2
2017 թվականին ՄՈՒՀ-ում մշակվել և Գիտխորհրդի կողմից հաստատվել է «Մագիստրոսական թեզի պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման կարգը» (Հավելված 3.1), որտեղ նկարագրված են մագիստրոսական թեզերի պահանջները և գնահատման չափանիշները: **(Հավելված 3.1, էջ 21)**	

Տեսականորեն ձևակերպված են ակադեմիական ազնվության և անազնվության դրսևորումներ, սակայն պրակտիկայում չեն կիրառվում գրագողության բացահայտման առցանց և փաթեթային գործիքներ: Ակադեմիական ազնվության ապահովման տեսանկյունից հարկավոր է ստեղծել և պահպանել նախորդ տարիների մագիստրոսական թեզերի էլեկտրոնային շտեմարան, ինչը հնարավորություն կտա հայտնաբերել թեմաների կրկնությունները: Գրագողության դեմ պայքարի մեխանիզմներից մեկն է թեմաների կրկնության բացառումը: Փորձագիտական խմբին ներկայացված մագիստրոսական թեզերից մի քանիսը պարունակում են այլ աղբյուներից բառացի վերարտադրություններ և մեջբերումներ, երբեմն՝ առանց հղումների, ինչը սահմանվում է որպես գրագողություն: Այնուհանդերձ այս երևույթները հաշվի չեն առնվել գնահատման ժամանակ, քանի որ ակադեմիական ազնվության սկզբունքների խախտման ակնհայտ դրսևորումներ ունեցող աշխատանքները գնահատվել էին բարձր՝ 80 միավոր և ավելի:

Ուսումնասիրված մագիստրոսական ատենախոսությունների (ընդհանուր թվով՝ 10 աշխատանք) ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ոչ բոլոր թեզերն են բավարարում սահմանված չափանիշները, մասնավորապես՝ որոշ թեզերում առկա են հետազոտական բաղադրիչներ, որոշներում՝ ոչ. ծավալի գերակշիռ մասը ապահովված է այլ աղբյուներից վերցված նյութերով, հետազոտական բաղադրիչը թույլ է, փոքր է ուսանողի հետազոտական նախաձեռնողականության ներդրումը: (**Հավելված 3.2)**

Հետազոտական բաղադրիչի թույլ լինելը վտանգում է ՄՈՒՀ-ում ստեղծվող գիտելիքի վավերությունը:

Գովելի է, որ ռեֆերատիվ բնութի աշխատանքները մագիստրոսական թեզերի ընդհանուր թվի ոչ մեծ մասն են կազմում:

Փորձագիտական խումբը եզրակացնում է, որ կարիք կա հետազոտական գործընթացներում բարձրացնել ուսանողների ներգրավվածության աստիճանը:

Ուսանողների հետազոտական ակտիվությունը շատ դեպքերում սահմանափակվում է մագիստրոսական թեզերում հետազոտական որոշակի բաղադրիչի ներդրմամբ, ինչն անհրաժեշտ, բայց և ոչ բավարար պայման է ուսանողների ակտիվ հետազոտական մոտիվացվածությունն ու հետաքրքրվածությունը ապահովելու համար:

Դրական փաստեր	**Բացասական փաստեր**
1. Ուսանողի գիտելիքի գնահատման համակարգը պարբերաբար վերանայվում է: 2. Գործում է Ակադեմիական ազնվությանը օժանդակող ընթացակարգ, համաձայն որի ՄՈՒՀ-ում քննություններն անցկացվում են գրավոր՝ անանուն և ծածկագրված ծրարնեյտվ: 3. Առկա են մագսիտրոսական թեզերի մշակման պահանջներ և գնահատման չափանիշներ ըստ առանձին բաղադրիչների:	1. Գնահատման համակարգում (մասնավորապես գնահատման կշիռներում) ներմուծված փոփոխությունները հիմնված չեն վերլուծությունների հիման վրա: 2. Բոլոր դասընթացների համար գնահատման մեթոդների կազմը նույնական և կրկնվող է բոլոր վերջնարդյունքների համար:

4. ՄՈԻԾ-ում գործում է կրթական ծրագրերի մշտադիտարկաման և վերանայման կարգ: 5. ՄՈՒՀ-ում գործում դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ՝ հիմնված ուսանողների հետ հարցումների միջոցով հետադարձ կապի, դասալսումների, պրակտիկայի ղեկավարների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների արդյունքների վրա: 6. Կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:	3. Գնահատման կիրառվող մեթոդներն առավելապես միտված են գիտելիքի գնահատմանը, քան հմտությունների և կարողությունների և ոչ միշտ են համադրելի ակնկալվող արդյունքներին: 4. Ձևավորող գնահատման (formative assessment) թույլ կիրառումը, ինչպես նաև եզրափակիչ գնահատումների գերակշռող լինելը ՄԿԾ-ում կարող է նվազեցնել ուսումնառողի մասնագիտական աստիճանական աճը, խաթարել բուն վերջնարդյունքի ձեռքբերման գնահատման օբյեկտիվությունը: 5. Ակադեմիական ազնվությունը երաշխավորող ընթացակարգերում գրագողության դեմ պայքարի և կանխարգելիչ միջոցառումների համաբուհական ըմբռնումն ու մոտեցումները հստակ ու կանոնակարգված չեն: 6. Տեսականորեն ձևակերպված են ակադեմիական ազնվության և անազնվության դրսևորումներ, սակայն պրակտիկայում չեն կիրառվում գրագողության բացահայտման առցանց և փաթեթային գործիքներ: 7. Դեռևս երաշխավորված չէ, որ կրթական ծրագրի մակարդակում գործում է ակադեմիական ազնվության կիրառվող փորձ. բողոքարկման ընթացակարգին իրազեկվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտություն կա: 8. Գնահատականների բողոքարկման բանավոր ընթացակարգի գերակշիռ լինելը,

	ինչի արդյունքում բողոքների առաջադրման հիմքերի վերլուծություններ չեն իրականացվել: 9. Պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների և ՄԿԾ-ի շրջանակում շնորհվող որակավորումների համապատասխանությունը գնահատելու ուղղությամբ աշխատանքներ դեռ չեն տարվել:

Հիմնական խորհրդատվություն և արձանագրված խնդիրների շտկման առաջարկություններ

1. Յուրաքանչյուր առարկայի համատեքստում ներդնել գնահատման չափանիշահեն բաղադրիչներ, ուժեղացնել ձևավորող գնահատման համակարգը:
2. Մշակել ակադեմիական ազնվության մշակույթի ամրապնդմանը միտված ուղեցույց-ուսանողական ձեռնարկներ, որտեղ կբացատրվի, թե ինչ է ակադեմիական ազնվությունը և ինչպես խուսափել այն խախտելուց:
3. Քայլեր ձեռնարկել ակադեմիական ազնվությունն ու գնահատման օբյեկտիվությունն երաշխավորող ընթացակարգերն ու մեխանիզմներն մշտադիտարկելու, դրանց արդյունավետությունը գնահատելու ուղղությամբ:
4. ՄԿԾ-ի ընթացիկ մշտադիտարկման և գնահատման գործընթացը համապատասխանեցնել պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում սկզբունքին և սահմանել հստակ պարբերականություն:
5. Մշակել դասալսումների արդյունքների գնահատման ձևաչափ, ինչպես նաև ներդնել տարբեր մեխանիզմներով հավաքագրվող տվյալների վերլուծման ընդհանրական մոտեցում:
6. Արտագրություններն ու գրագողության դեպքերը վերահսկելու նպատակով ներդնել մագիստրոսական թեզերի թեմաների կրկնությունները կանխող և հակազեղծարար մեխանիզմներ:
7. Ըստ կրթական ծրագրի՝ գնահատել պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջները՝ հաշվի առնելով կոնկրետ ՄԿԾ-ի առանձնահատկությունները, պլանավորել նախասահմանված կոմպետենցիաների զարգացումը:
8. Հաշվետվություններում ներդնել գնահատման առանցքային ցուցանիշների (KPIs) հիման վրա գնահատման համակարգը:

ՉԱՓԱՆԻՇ 3: ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է համեմատական վերլուծություն միջազգային գործընկեր բուհի և ՄՈՒՀ-ի «Լրագրություն» կրթական ծրագրերի ուսումնական պլանների և հետազոտական կրթամասերի միջև:

Չափորոշիչ ա. ***ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին:*** **Չափորոշիչ բ. Առկա են ուսումնառության, դասավանդման մեթոդների, կրթական վերջնարդյունքների ներքին և միջազգային բենչմարքինգի արդյունքները:**	
Հիմքեր	Ամբիոնի զարգացման ռազմավարական ծրագիր, Հավելված 1.1 Ամբիոնի գործունեության տարեկան հաշվետվություն, Հավելված 1.2, Հավելված 1.2.1 ՊԴ կազմի կարիքների վերհանման, գնահատման հարցման արդյունքների վերլուծություն, Հավելված 1.3, 1.3.1 ՀՖԿՍՊԻ-ի կազմակերպական կառուցվածք, Հավելված 1.4

Գիտահետազոտական գործունեությունը, նորարարությունն ու զարգացումը և վերջիններիս կապն ուսումնառության հետ ՀՖԿՍՊի-ի գործունեության առաջնահերթություններից, է ինչն ամրագրված է բուհի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում: ՀՖԿՍՊԻ գիտահետազոտական քաղաքականության ընթացիկ ղեկավարումն իրականացվում է Ուսումնագիտական գծով պրոռեկտորի, իսկ ֆակուլտետային մակարդակում՝ դեկանների կողմից: Գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման ենթակառուցվածքը ներառում է Գիտական խորհուրդը, իսկ ուսանողների ներգրավման մասով՝ Ուսանողական գիտական ընկերությունը:**(Հավելված 1.1)**

«Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի հետազոտական գործունեության հավակնությունները և հետաքրքրությունները սահմանված են Մարզական լրագրության ամբիոնի ՌԾ-ում՝ «Գիտահետազոտական գործընթաց» խորագրի ներքո:

Համաձայն ՌԾ-ի՝ հետազոտությունները և նորարարությունը ամբիոնի երեք ռազմավարական նպատակներից երկրորդն է և ձևակերպված է ռազմավարական երեք խնդիրներով՝

- ✓ Մշակել և ներդնել նորարական գիտահետազոտական տեխնոլոգիաներ:
- ✓ Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում:
- ✓ Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը՝ ապահովելով հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների մասնակցությունը:

«Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրի հետազոտական գործունեության հավակնությունները և հետաքրքրությունները սահմանված են Մարզական լրագրության ամբիոնի ՌԾ-ում՝ «Գիտահետազոտական գործընթաց» խորագրի ներքո:

Համաձայն ՌԾ-ի՝ հետազոտությունները և նորարարությունը ամբիոնի երեք ռազմավարական նպատակներից երկրորդն է և ձևակերպված է ռազմավարական երեք խնդիրներով՝

- ✓ Մշակել և ներդնել նորարական գիտահետազոտական տեխնոլոգիաներ:
- ✓ Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում:
- ✓ Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը՝ ապահովելով հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների մասնակցությունը:

ՌԾ-ում այդ խնդիրների իրագործումը մանրամասնեցված է կոնկրետ գործողություններով: Նկարագրված են պահանջվող ռեսուրսները, որոնց համապատասխան նախատեսված է մշակել և ծավալել հետազոտական գործունեություն: Ուսումնասիրելով ամբիոնի վերջին երեք տարվա տարեկան հաշվետվությունները՝ նկատում ենք, որ անհրաժեշտ ռեսուրսների պակասը լուրջ խոչընդոտ է հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

Վերջին երեք տարիներին ամբիոնի համար շարունակում է խնդիր մնալ մեդիատարածքի կառուցման հարցը՝ համալրված լրագրողական և մեդիահետազոտողի աշխատանքի համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով, որոնք թույլ կտան դասախոսական և ուսանողական համատեղ հետազոտական աշխատանքը կազմակերպել բացառապես գործնական միջավայրում և ունենալ շոշափելի արդյունքներ: **(Հավելված 1.2, Հավելված 1.2.1)**

Կրթական ծրագրում ներգրավված պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ը զբաղվում է գիտահետազոտական գործունեությամբ: ՄԿԾ-ի շրջանակում իրականացվող հետազոտական աշխատանքները, որպես կանոն, համապատասխանում են ամբիոնի գիտական ուղղվածությանը, իսկ դրանց արդյունքները մասնագիտական լայն հասարակությանն են ներկայացվում գիտական ժողովածուների, պարբերականների, գրքերի և ինֆորմացիայի տարածման այլ միջոցներով: Գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացման համար ավելի մեծ չափով օգտագործվում են համացանցի ընձեռած հնարավորությունները: Կատարվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են համապատասխան հետազոտական զեկույցներում և հրապարակումներում:

Դասավանդողներն ուսանողներին իրենց կատարած հետազոտական արդյունքներին հաղորդակից են դարձնում ոչ միայն դասավանդվող առարկաների, առանձին թեմատիկ դասախոսությունների միջոցով կամ ինքնուրույն շխատանքների համար հանձնարարվող գրականությամբ, ներառում են հետազոտական աշխատանքներում՝ ամբողջացնելով այն պրակտիկաների միջոցով:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՁԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆԸ ԴԱՌՆՈՒՄ ՄԱՏՉԵԼԻ[2]			
		Հարցմանը մասնակցած դասախոսների թիվը՝ 12	**Հարցվածների տոկոսային բաշխվածությունը**
1.	Ներառվում են դասախոսություններում	12	100 %
2.	Առկա է գրադարանում	8	66, %
3.	Ուսանողական պրակտիկաների ընթացքում	7	58 %
4.	Էլեկտրոնային համապատասխան կայքերի միջոցով	6	50 %
5.	Այլ (Գործնական պարապմունքների ընթացքում,ավարտական աշխատանքներ ղեկավարելիս)	5	41 %

Պետք է նկատենք, որ ամբիոնի ՊԴ կազմի այն ներկայացուցիչները, ովքեր ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում, չեն ցուցաբերում գիտահետազոտական աշխատանք կատարելու հետաքրքրություններ, հիմնականում երիտասարդ դասախոսներ են: (**Հավելված 1.3, Գծապատկեր 5.6**)

Գիտական հետազոտություններում երիտասարդ գիտնականների ներգրավվման, գերակա ոլորտներում հետազոտությունների աշխուժացման նպատակով անհրաժեշտ է մշակել երիտասարդ գիտնականների ներգրավվածության խրախուսման հայեցակարգային մոտեցումներ: Նման քաղաքականությունը նախադրյալներ կստեղծի հետազոտություններում ներգրավված երիտասարդ գիտնականների համամասնության փոփոխության, միջազգային դրամաշնորհային նախագծերում բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետների ներգրավման, ինչպես նաև երիտասարդ գիտնականների խրախուսման միջազգային նախագծերում վերջիններիս մասնակցությունը երաշխավորելու համար: Հետազոտական

[2] Տես՝ **Հավելված 1.3**. Մարզական լրագրության ամբիոնի դասախոսական կազմի տվյալները դուրս են բերվել լրացված հարցաթերթերը ուսումնասիրելու արդյունքում:

գործունեության խրախուսումը հնարավոր է որակավորման բարձրացման, միջազգային գիտաժողովներին, վերապատրաստումներին և միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցության, համաշխարհային ճանաչում ունեցող գիտական հանդեսներում հետազոտությունների արդյունքների հրապարակման եղանակներով:

Այս համատեքստում կարևորվում է նաև ուսանող-դասախոս հետազոտական աշխատանքների ընդլայնումը:

Գիտահետազոտական գործունեության մոտիվացիայի անկման պատճառները և ընդհանրապես հետազոտական աշխատանքի իրականացման խոչընդոտները պարզելու նպատակով դասախոսական կազմի հետ անցկացվել է հարցում, որի արդյունքներից պարզ է դառնում՝ հարցվածների մեծամասնության կարծիքով գիտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիայի անկման պատճառներից է ֆինանսավորման պակասը, 22 %-ը առանձնացրել է հետազոտական սարքավորումների բացակայությունը, 8 %-ը ժամանակի սղության պատճառով չի իրականացնում գիտական գործունեություն, 7 %-ը ընդհանրապես մոտիվացված չէ գիտական աշխատանք կատարելու համար, իսկ 5%-ը այս հարցում որևէ խոչընդոտ չի տեսնում: **(Հավելված 1.3, Գծապատկեր 5.4)**



Հարցման մասնակիցների մատնանշմամբ՝ խնդիրը ոչ թե գիտական գործունեությամբ զբաղվելու ներքին պահանջմունքի բացակայությունն է, այլ այն իրական խոչընդոտները, որոնք կարող են գիտական գործունեությամբ զբաղվելու մոտիվացիայի անկման պատճառ դառնալ, ինչպես օրինակ՝ դասախոսների ցածր աշխատավարձը. ստիպված են լինում աշխատանքի անցնել մի քանի բուհերում, որ լրացնեն այն բացը, որն առաջանում է միայն մեկ տեղում աշխատելու և միայն այնտեղից աշխատավարձ ստանալու արդյունքում: Հետևաբար,

հասկանալի պատճառներով այս իրավիճակը բացասաբար է անդրադառնում դասավանդման կատարողականի, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու պատրաստակամության վրա:

Ըստ փորձագիտական խմբի դիտարկումների՝ բուհի դասախոսական կազմի հետազոտական ակտիվ գործունեության խոչընդոտներից է նաև այն, որ շատ դասախոսներ այս ուղղությամբ ունեն տեղեկատվության պակաս, մասնավորապես, լավ չեն պատկերացնում, թե ինչ ճանապարհներով կարելի է տեղեկանալ տեղական և միջազգային գիտաժողովների, աշխատաժողովների կամ դրամաշնորհային հետազոտական ծրագրերի, վերապատրաստման, որակավորման դասընթացների վերաբերյալ: Գիտական գործունեության վերաբերյալ նորությունները բուհը կարող է պրոֆեսորադասախոսական կազմին հասնելի դարձնել տարբեր մեթոդներով, այդ թվում ոչ միայն կայքի և ամբիոնների միջոցով, այլ նաև անհատապես, օրինակ անձնական էլ. հասցեների միջոցով (հաշվի առնելով դասախոսների անձնական հետաքրքրությունները), իրազեկող դասընթացներ կազմակերպելով: Խնդրի լուծմանը էապես կնպաստի դասախոս-հետազոտողների Academia.edu, ResearchGate, Google Scholar այլ գիտահետազոտական կայքերում գրանցումը, արդեն առկա գիտական աշխատանքների հրապարակումը: Այս հարթակները ևս կնպաստեն նրանց գիտական աշխատանքների միջազգայնացման գործընթացին և մրցունակության բարձրացմանը, ինչն էլ իր հերթին համագործակցությունների նոր հնարավորություններ կբացի հետազոտողների համար:

Հաջորդ խնդիրը, որը ընդգծել են դասախոսները, մեդիալաբորատորաների և ընդհանուր առմամբ շենքային պայմաններն են, որոնք խոչընդոտում են գիտահետազոտական աշխատանքների իրականացումը:

Ընդգծենք նաև, որ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված դասախոսները համատեղությամբ աշխատում են նաև այլ բուհերում և հետազոտությունները իրականացվում են հիմնականում անհատական նախաձեռնությունների շրջանակում, որոնք շատ հաճախ փոխկապակցված չեն բուհի ռազմավարության հետ, ինչն էլ կարող է բացասաբար ազդել հետազոտական գործունեության գնահատման, դասավանդման նյութերի բովանդակության վերանայումների և ուսումնական գործընթացի փոխկապակցման վրա:

Կարելի է եզրակացնել նաև, որ հիմնականում փոքրաթիվ են ազդեցության բարձր վարկանշային գործակից ունեցող պարբերականներում բուհի ՊԴ կազմի հրատարակությունները: **(Հավելված 1.3.1)**

Վերը նշված հետազոտական ծրագրերի իրագործման համար պետք է հստակ մշակվեն առաջարկվող ծրագրերի ընտրության, դրանց վերահսկողության, հաշվետվողականության, արդյունքների թափանցիկության, կիրառելիության արդյունավետության չափման մեխանիզմներ: Առաջարկվում է խրախուսել դասախոսներին՝ բուհից դուրս իրենց կատարած հետազոտությունների արդյունքները հրապարակելու, գիտական նորույթները դասավանդման գործընթացում ներդնելու համար:

Ինչպես նշված է ամբիոնի ՌԾ-ում ամբիոնի հետազոտության գործունեության զարգացման քաղաքականության ցուցիչներ են համարվում միջամբիոնային համագործակցությունը

ուսանողական դասախոսական գիտաժողովների, մագիստորական ատենախոսությունների և գիտահետազոտական այլ աշխատանքների ու նախագծերի իրականացման շրջանակում: Փորձագիտական խմբին պարզ դարձավ, որ ամբիոնը ունի գիտական գծով ներկայացուցիչ, ով նպաստում է ուսանողների հետազոտական աշխատանքների կազմակերպմանը:

Գիտական հոդվածների, մագիստրոսական ատենախոսությունների գրախոսությունը և պաշտպանության թույլտվությունը կանոնակարգված է համապատասխան ընթացակարգերով: Այնուհանդերձ, փորձագիտական խումբը խնդիր է համարում, որ գիտահետազոտական գործունեության ռազմավարության արդյունավետության վերլուծության և գնահատման հստակ կառուցակարգեր չկան:

Հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունը երաշխավորելու և գրագողությունը կանխարգելելու նպատակով հրապարակման նախապատրաստված նյութերը՝ գիտական հոդվածներ, գիտաժողովներում ներկայացվող զեկուցումների թեզիսներ, քննարկվում են համապատասխան ամբիոններում, Գիտական խորհրդում, որից հետո՝ երաշխավորվում հրատարակության:

Բուհում իրականացված կառուցվածքային վերադասավորումների և փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ հետազոտական տիրույթի զարգացումը բուհի ռազմավարական առաջնահերթություններից է: **(Հավելված 1.4)**

Այս համատեքստում կարևորվում է երկարաժամկետ ռազմավարությամբ և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերով ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար: Վերանայման փուլում են գիտահետազոտական գործունեության զարգացմանը միտված գործող ընթացակարգերն ու քաղաքականությունը:

Այնուհանդերձ, փորձագիտական խումբը ընդգծում է արված եզրահանգումներն ու հետևությունները չեն արտացոլում հետազոտական գործունեության արդյունավետությունը մեծացնելու նպատակով բուհի նոր ղեկավար կազմի գործունեության իրականացրած փոփոխությունների ազդեցությունները, քանի որ ապահովված չէ այն ժամանակահատվածը, որը թույլ կտար հետազոտել և արձանագրել փոփոխությունների դրական միտումներն ու դինամիկան:

Չափորոշիչ բ. ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, կրթական ծրագիրը համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ և նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը և միջազգայնացմանը: ՄԿԾ-ն իրականացվում է հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձն ու մոտեցումները:	
Հիմքեր	Բենչմարկինգի ընթացակարգ, Հավելված 2.1 Թոմաս Մուր համալսարանի հետ փոխըմբռնման հուշագիր /Լրագրություն կրթական ծրագրի

	շարժունության իրականացման նպատակով/, Հավելված 2.2 Բենչմարքինգի արդյունքների հաշվետվություն, Հավելված 2.3 Հնդկաստանի SPAA India ակադեմիայի համագործակցության հուշագիր, Հավելված 2.4 Արտասահմանյան մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ՝ վերջին 5 տարվա համար, Հավելված 2.5

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄԿԾ-ի շրջանակում պարբերաբար իրականացվում է կրթության շարունակականության և կարիերայի զարգացման հնարավորությունների համեմատական վերլուծություն տարբեր բուհերի կրթական ծրագրերի հետ: (**Հավելված 2.1)**

ՄԿԾ–ում ներդրված ուսումնառության կրեդիտային ECTS համակարգը և համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը համատեղելի է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի հետ, որը ապահովում է ուսանողների շարժունությունը միջազգային կրթական համաձայնագրերի առկայության դեպքում, նաև հիմք դառնում փորձի փոխանակման նպատակով տարբեր բուհերի միջև փոոխհամագործակցության, ուսանողների փոխադարձ ուսումնառության համար:

Այս տեսանկյունից ամբիոնը ձեռքբերում է համարում Բելգիայի Թոմաս Մուր հեղինակավոր համալսարանի Լրագրության ֆակուլտետի հետ համագործակցության հուշագրի կնքումը, որը հնարավորություն է տալիս միջազգային համատեղ հետազոտություններ կատարել, իրականացնել միջազգային հետազոտական փոխանակման ծրագեր, նպաստել ուսանողների և դասախոսների շարժունությանն ու հետազոտական ծրագրերի միջազգայնացմանը: **(Հավելված 2.2)**

Հարկավոր է ընդգծել, որ ՄԿԾ-ի շրջանակում հետազոտական գործունեության միջազգայնացման նպատակով իրականցվել է միջազգային գործընկեր բուհի «Լրագրություն» կրթական ծրագրի բենչմարքինգ՝ համադրելով ոչ միայն հենանիշ բուհի առարկայացանկերը, կրթական ծրագրի վերջնարդյունքները, գնահատման չափանիշներն ու մեթոդները, այլև կրթական ծրագրում հետազոտական բաղադրիչի գործարկումը: **(Հավելված 2.3, էջ 15-19)**

Ինչպես նշված է **Խնդիր 1-ի գ. կետում**, թեև գործընկեր բուհերի բակալավրի կրթական ծրագերում կան անհամադրելի կրթական բաղադրիչներ, որոնք խոչընդոտում են ուսանողական շարժունության իրականացումը, սակայն մագիստոսի կրթական ծրագրերի միջազգայնացման հնարավորությունները առավել տեսանելի են և հեռանկարային:

Ինչպես փորձագիտական խումբը պարզեց, ձևավորվում է համագործակցության վիրտուալ հարթակ, որտեղ կողմերը կտարածեն համատեղ իրականացված մեդիահետազոտությունների արդյունքները, հայ ուսանողները հնարավորություն կունենան անգլերենով հրատարակվել

Թոմաս Մուր համալսարանի Լրագրության ֆակուլտետի ուսանողական ամսագրում:
Փորձագիտական խմբի կարծիքով, այս հնարավորությունը միևնույն ժամանակ ծառայում է կրթական երկու կարևոր նպատակի՝ նախ նախադրյալներ ստեղծել ՄԿԾ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման համար, նպաստել դրա շարունակական բարելավմանը, ինչպես նաև խթանել ուսանողների մասնագիտական աճն ու կարողությունների զարգացումը (օտար լեզվի տիրապետում, հաղորդակցական կարողությունների զարգացում, միջազգային գործընկերների հետ մեկ թիմում աշխատելու և համագործակցելու ունակություն):
Այսպիսով, նախադրյալներ ստեղծված են ուսանողական և դասախոսական շարժունության իրականացման համար, սակայն պրակտիկայում դեռևս արձանագրված չեն փոխանակման կամ շարժունության փորձեր, ինչպես նաև՝ համագործակցության կայացած ծրագրեր:
Միջազգային նմանատիպ կրթական ծրագրերի հետ համահունչությունը խթանող հիմքերից է նաև Հնդկաստանի SPAA India առաջատար ակադեմիայի հետ համագործակցությունը: (**Հավելված 2.4)**
Կարևորելով կրթության միջազգայնացման հայեցակարգը՝ 2019-2020 ուստարվա սեպտեմբերի 20-23-ը Մարզական լրագրության ամբիոնի 3 երիտասարդ դասախոս և մագիստրատուրայի 3 ուսանող գործուղվել է Դելի մասնակցելու Sport India 2019 միջազգային գիտաժողովին:
Նկատենք, որ պատվիրակությունը Հնդկաստանում ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունը, հանդես է եկել առանձին զեկուցումներով, մեդիայի և սպորտի փոխառնչությունները թեմայով անցկացրել պանելային քննարկում, տեսառեպորտաժով պատմել մարզական լրագրության սեփական փորձի ու խնդիրների մասին, հարցուպատասխանի ձևաչափով ունեցել քննարկում տեղացի մասնագետների հետ:
Աշխատանքային այցի ընթացքում կնքված համագործակցության պայմանագրի շրջանակում հնարավորություն է ստեղծվել իրականացնել ուսանողների և դասավանդողների շարժունություն: Հստակ քայլեր են իրականացվել «Մենեջմենթ» մագիստրոսի կրթական ծրագրի միջազգայնացման ուղղությամբ. նոր ուսումնական տարում բուհը պատրաստվում է ընդունել հնդիկ ուսանողների:
Արդյունքում, երկու կրթական հաստատությունների միջև համագործակցության արդյունքում ուսանողը հնարավորություն ունի իր վաստակած կրեդիտներով և ստացած ընթացիկ ուսումնառությամբ ազատ, առանց նախապայմանների, ուսումը շարունակել, մասնագիտական պրակտիկա անցնել Հնդկաստանի գործընկեր ուսումնական հաստատությունում:
Ի մի բերելով իրականացված աշխատանքները՝ փորձագիտական խումբը կարծում է, որ արձանագրվել է նկատելի տեղաշարժ, եթե հաշվի առնենք ՄԿԾ-ի միջազգայնացման և շարժունության նախկինում ունեցած ցածր ցուցանիշները: Այս դեպքում ևս դեռևս չկան համագործակցային և շարժունության ծրագրերի օրինակներ, որոնք թույլ կտային ուսումնասիրել և գնահատել կրթական ծրագրի բարելման և միջազգայնացման ուղղությամբ իրականացվող գործընթացների արդյունավետությունը՝ կոնկրետ նախագծերի և ծրագրերի օրինակով: Այս պարագայում դիտարկվել է դասախոսական և ուսանողական կազմի մասնակցությունը միջազգային գիտաժողովին, որը օգնել է Հնդկաստանի գործընկերների հետ

գործակցությունը իրավական հիմքերի վրա դնել և սկիզբ դնել համագործակցային և փոխանակման ծրագրերի նախագծմանն ու իրականացմանը:

Փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՄԿԾ-ի միջազգայնացման լավ ու դրական փորձը դեռևս եզակի է, իսկ միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսանողների և դասավանդողների ներգրավվածության ավելացման համար հարկավոր է ներդնել աջակցման և խրախուսման լրացուցիչ մեխանիզմներ:

Տարբերակներից կարող է լինել օտար լեզվի անվճար ուսուցումը լեզվական խոչընդոտը հաղթահարելու համար, ինչպես նաև ՄԿԾ-ի շահակիցներին օժանդակել միջազգային համագործակցությունների արդյունքում ձեռքբերած մասնագիտական ժամանակակից գրականությամբ:

Պետք է արձանագրենք, որ կրթական ծրագրի պատասխանատու ամբիոնի դասախոսները առավելապես սեփական նախաձեռնությամբ են մասնակցություն ունենում հանրապետությունում և հանրապետությունից դուրս անցկացվող միջազգային գիտաժողովներին, ինչը նշանակում է միջազգայնացման գործընթացը խթանող և աջակցող ինստիտուցիոնալ մեխանիզմների գործարկումը թույլ է:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում և արտասահմանյան միջազգային գիտական հանդեսներում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել են գիտական հոդվածներ: Արտասահմանյան երկրների գիտական հանդեսներում ամբիոնի դասավանդողների հրատարակած գիտական աշխատանքների թիվը 2015-2020 թթ. կազմել է ընդհանուր հրատարակությունների թվի 5 % -ը: (**Հավելված 2.5)**

Ներկայացված տվյալը ցույց է տալիս, որ պետք է միջոցներ ձեռնարկել ԱՊՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակումներն ընդլայնելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՄԿԾ-ի միջազգայնացման լավ ու դրական փորձը դեռևս եզակի է, իսկ միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսանողների և դասավանդողների ներգրավվածության ավելացման համար հարկավոր է ներդնել աջակցման և խրախուսման լրացուցիչ մեխանիզմներ: Տարբերակներից կարող է լինել օտար լեզվի անվճար ուսուցումը լեզվական խոչընդոտը հաղթահարելու համար, ինչպես նաև ՄԿԾ-ի շահակիցներին օժանդակել միջազգային համագործակցությունների արդյունքում ձեռքբերած մասնագիտական ժամանակակից գրականությամբ: Պետք է արձանագրենք, որ կրթական ծրագրի պատասխանատու ամբիոնի դասախոսները առավելապես սեփական նախաձեռնությամբ են մասնակցություն ունենում հանրապետությունում և հանրապետությունից դուրս անցկացվող միջազգային գիտաժողովներին, ինչը նշականում է, որ միջազգայնացման ինստիտուցիոնալ գործընթացները խթանող և օժանդակող մեխանիզմները թույլ են: ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում և արտասահմանյան միջազգային գիտական հանդեսներում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել են գիտական հոդվածներ: Արտասահմանյան երկրների գիտական հանդեսներում ամբիոնի դասավանդողների հրատարակած գիտական աշխատանքների թիվը 2015-2020 թթ. կազմել է ընդհանուր հրատարակությունների թվի 5 % -ը: (**Հավելված 2.5)** Ներկայացված տվյալը ցույց է տալիս, որ պետք է միջոցներ ձեռնարկել ԱՊՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակումներն ընդլայնելու ուղղությամբ:	
Չափորոշիչ գ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:	
Հիմքեր	Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների ՄԿԾ-ների մասնագրեր, Հավելված 3.1, 3.1.1 ՈՒԳԸ տարեկան հաշվետվություններ, Հավելված 3.2 ***ITECH*** շրջված լսարանի նորաստեղծ հարթակ.ուսանող-դասախոս համատեղ նախագիծ, Հավելված 3.3
Կրթական ծրագիրը իրականացնող ամբիոնի ռազմավարական ծրագրում մեծ կարևորություն է տրվում ուսումնական գործընթացի փոխկապակցմանը հետազոտական գործունեության հետ: Ամբիոնի ՌԾ-ի Ուսումական գործընթաց ուղղության **Խնդիր 1**-ը սահմանում է. «Բարելավել դասավանդման և ուսումնառության գործընթացները՝ ապահովելով հետազոտական և ստեղծագործական գործունեության միասնականությունը»: Նշենք, որ կրթական ծրագրի ուսումնառողների հետազոտական աշխատանք կատարելու ունակությունները ձևավորվում են դեռևս բակալավրիատում՝ ուսումնական ծրագրերում ներառված և հետազոտական տարրեր պարունակող մի շարք ինքնուրույն աշխատանքների,	

հետազոտությունների և մեդիանախագծերի կատարման միջոցով: Այնուհետև այդ ունակությունները զարգացվում են մագիստրատուրայում՝ հետազոտական մեդիաուսումնասիրությունների, մեդիակառավարման, հանրային կապերի հետազոտությունների և հետազոտական բնույթ կրող մագիստրոսական թեզի կատարման օգնությամբ:**(Հավելված 3.1, 3.1.1, ՄԿԾ-ի նկարագիրը)**

ՄԿԾ-ի կառուցվածքի և բովանդակության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ծրագրում ներառված են առանձին դասընթացներ, որոնցում առկա են հետազոտական բաղադրիչներ, դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները նպաստում են հետազոտահեն կարողությունների ձևավորմանը: Դիտարկենք «ԶԼՄ և օրենսդրություն», «Մեդիաշուկայի ուսումնասիրության մեթոդները», «ԶԼՄ կառավարում» «Ժամանակակից մեդիակրթությունը և մեդիաինդուստրիա» առարկաները, որոնք ունեն հետազոտական ուղղվածություն և նպատակաուղղված են դեպի արդյունավետ հետազոտական և մասնագիտական աշխատանք կատարելու ունակ երիտասարդ հետազոտողների պատրաստմանը, նրանց համար ապահովելով ապագա կարիերայի և աշխատանքի ընդլայնված հնարավորություններ ինչպես ակադեմիական միջավայրում, այնպես էլ դրանից դուրս:

ՄԿԾ-ի բովանդակությունից պարզ է դառնում, որ հետազոտական կոմպետեցիաների ձևավորմանն են նպաստում նաև «Կիրառական սոցիոլոգիա», «Բարձրագույն կրթության մանկավարժություն և հոգեբանություն» ուսումնական առարկաները: «Կիրառական սոցիոլոգիա» դասընթացի առարակայական նկարագրում առկա վերջնարդյունքների հետազոտական բաղադրիչը համահունչ է ՄԿԾ-ի կոմպետենցիաներին, իսկ «Բարձրագույն կրթության մանկավարժություն և հոգեբանություն» առարկայի առարկակայան նկարագրում առկա նպատակները, վերջնարդյունքները չեն կարող ապահովել ՄԿԾ-ի հետազոտական բաղադրիչի իրացումը: Կարիք կա վերանայել այս անհամապատասխանությունը: Բացի այդ մեկ ուրիշ խնդիր է «Բարձրագույն կրթության մանկավարժություն և հոգեբանություն» առարկան «Լրագրության» մագիստրոսի ՄԿԾ-ի առարկայացանկում ներառելը, քանի որ այն ոչ միայն համահունչ չէ կրթական ծրագրի վերջնարդյունքներին, այլև չի արտացոլում մասնագիտական որակավորման շրջանակը:

Սակայն դասավանդման և ուսումնառության մեթոդների և գնահատման մեթոդների փոխկապակցման տեսանկյունից խնդիր է առաջացնում գնահատման գործող համակարգը, որում ներառված չէ հետազոտական բաղադրիչն ու կշիռը:

Մասնավորապես, դժվարություն է առաջանում յուրաքանչյուր կիսամյակում գնահատել ուսանողների գիտահետազոտական և մագիստրոսական թեզի պատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Գնահատման համակարգի թերությունները կարող են պատճառ դառնալ ակադեմիական անազնվության, քանի որ երբ չկա գնահատման հստակ չափանիշների կիրառման միասնական մոտեցում, դասախոսը կարող է գնահատման սուբյեկտիվ վարքագիծ դրսևորել՝

արտոնություններ շնորհել որոշ ուսանողների կամ պակաս բարյացակամ լինել մյուսների նկատմամբ:

ՄԿԾ–ի շրջանակում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխադարձ կապն ապահովվում է հատկապես երկրորդ կիսամյակում անցկացվող գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում: Այդ ժամանակ է ձևավորվում մարզական լրագրության մեդիատեսաբանը, մեդիահետազոտողն ու քննադատը, ով չի կարող լինել միայն պասիվ գիտելիքների կրող, այլ պետք է տիրապետի ակտիվ հետազոտման մեթոդների, որպեսզի իր աշխատանքային գործունեության ընթացքում կարողանա ինքնուրույն, գիտականորեն հիմնավորված որոշումներ ընդունել, կարողանա օգտվել մասնագիտական, գիտական գրականությունից և կիրառի հետազոտման ժամանակակից մեթոդներ: Ուսանողի ներգրավումը հետազոտական աշխատանքներում զարգացնում է մտածողության և գործնական խնդիրների լուծման համար անհրաժեշտ ճկունություն, անկանխատեսելի իրավիճակներում արագ կողմնորոշվելու, ոչ ստանդարտ լուծումներ գտնելու ունակություն: Այս մեթոդը ճանաչողական առումով հետազոտական է, սակայն ֆունկցիոնալ նշանակությամբ ուսուցողական, այսինքն օբյեկտիվ գիտական արդյունքների ստացումը ոչ միշտ է իրատեսական:

Որպես թերություն կարելի է նշել այն փաստը, որ գիտահետազոտական աշխատանքների համար հատկացվող սահմանափակ նյութական և տեխնիկական ռեսուրսները հաճախ դժվարություններ են ստեղծում հետազոտություն իրականացնող ուսանողների համար

Ուսանողների գիտելիքների յուրացման և հետազոտական հմտությունների կիրառման ուղիներից է նաև ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող գիտաժողովների, սեմինարների մասնակցությունը: Ուսումնագիտական զեկույցների պատրաստումը կատարվում է ամբիոնների խորհրդատվությամբ և աջակցությամբ: Ուսանողների լավագույն հետազոտական աշխատանքները տպագրվում են ՀՖԿՍՊԻ-ի գիտական հանդեսներում:

Իբրև հավելում նշենք, որ կրթական ծրագրի շրջանակում իրականացվել են ուսանող-դասախոս համատեղ հետազոտության հաջողված փորձեր: Գովելի է, որ գործատուների հետ ևս իրականացվել են հետազոտական աշխատանքներ, ինչը օժանդակում է ոչ միայն հետազոտական կարողությունների զարգացմանը, այլև օգնում մագիստրոսին բուհից աշխատաշուկա դյուրությամբ անցնել**: (Հավելված 3.3**)

Այս համատեքստում նշենք, որ ուսանողների հետազոտական հմտությունները կզարգանան նաև բուհ-գործատու համատեղ մագիստրոսական ծրագրերի ներդրմամբ: Հատուկ կազմված նման ծրագրերը կրում են թիրախավորված բնույթ և ուսանողների մոտ զարգացնում են աշխատաշուկայի պահանջներին անհրաժեշտ կոմպետեցիաներ և հետազոտական կարողություններ:

Սակայն հարկ է նշել, որ ուսումնասիրված և վերլուծված չեն՝ դասավանդման գործընթացում ստացված նորագույն գիտելիքի և հմտությունների ներգրավման, ուսումնական

բովանդակության բարելավման տեսանկյունից հետազոտական այդ նախագծերն ինչ արդյունքներ են տվել:	
Դրական փաստեր	Բացասական փաստեր
1. Գիտահետազոտական գործունեության զարգացումը ՄՈՒՀ-ի, Մարզական լրագրության ամբիոնի կարևոր գերակայություններից է: 2. ՄՈՒՀ-ում ապահովված է հետազոտությունների իրականացման և զարգացման գործընթացների իրավական հիմքը, ընդունված են համապատասխան կանոնակարգեր: 3. Գործում են կատարվող հետազոտությունների արդյունքների վավերացման հստակ մեխանիզմներ: 4. Ուսանող-դասախոս համատեղ հետազոտական նախագծերի իրականացումը. ITECH նորաստեղծ առցանց հարթակը, որը լավ հնարավորություն է դասախոսական կազմի SS հմտությունների կիրառման, ինչպես նաև «խառը ուսուցման» մեթոդները զարգացնելու համար: 5. Ամբիոնի տարեկան հաշվետվություններում հետազոտությունների իրականացման ուղղությամբ իրականացման աշխատանքները համակարգված ձևով ներկայացված են: 6. ՄՈՒՀ-ը Բելգիայի Թոմաս Մուր համալսարանի հետ համագործակցության շրջանակում վերանայել է «Լրագրություն» կրթական ծրագիրը՝ կրթական գործընթացի արդիականացման և «շարժունության պատուհանի» ապահովման նպատակով: 7. ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող հետազոտությունների միջազգայնացման ուղղությամբ որոշակի նախադրյալների ստեղծումը՝ օտարերկրյա բուհերի հետ	1. ՄԿԾ-ի շրջանակում գիտահետազոտական գործունեության ռազմավարության արդյունավետության վերլուծության և գնահատման հստակ կառուցակարգերի բացակայություն: 2. Գիտական հետազոտություններում երիտասարդ դասախոսների ցածր ներգրավվածությունը, երիտասարդ հետազոտողների ներգրավվածության խրախուսման հայեցակարգային մոտեցումների թույլ կիրակումը: 3. Որպես հետազոտական գործունեության արդյունք դիտարկվում է դասախոսների կողմից հոդվածների հրապարակումը, միջազգային գիտաժողովների մասնակցությունը, որը հիմնականում տեղի է ունենում դասախոսների անձնական նախաձեռնությամբ և այլ բուհերում իրականացվող հետազոտությունների շրջանակում: 4. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի թույլ փոխկապակցվածությունը, գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների թույլ ներգրավվածությունը, ուսումնառողների հետազոտական գործունեության խրախուսման հստակ քաղաքականության բացակայությունը: 5. Ուսանողների փոխանակման միջազգային համագործակցային ծրագրի մեկնարկը տրված է,

համագործակցության վերաբերյալ համաձայնագրերի կնքմամբ: 8. Առկա է համեմատության հիման վրա բենչմարքինգի հաստատված ընթացակարգ և քաղաքականություն: 9. Միջազգային նմանատիպ կրթական ծրագրի հետ բովանդակային համահունչությունը ապահովելու նպատակով իրականացվել է բենչմարքինգի վերլուծություն:	սակայն գործնականում փոխանակման որևէ ծրագիր կամ միջազգային հետազոտական համատեղ նախագիծ չի իրականացվել: 6. Ուսանողական համակազմում արտագնա և ներգնա ուսանողների բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություն և արձանագրված խնդիրների շրկման առաջարկություններ

1. Մշակել և ներդնել ՄՈՒՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմներ առաջևահերթությունը տալով ՄՈՒՀ-ում դասավանդվող առարկաներին վերաբերող և նախապես որոշված թեմատիկայով ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական հրապարակումների ստեղծմանը և դրանք ուսանողներին հասանելի դարձնելուն:
2. Մշակել հետազոտական գործունեության և ուսումնառության գործընթացի կապակցման քաղաքականություն, որի համաձայն գիտահետազոտական ուսումնասիրությունը կդառնա ուսումնառության արդյունք:
3. Բազմազանեցնել կիրառական հետազոտական աշխատանքները գործատուների հետ համագործակցության շրջանակում:
4. Աջակցել ՊԴ կազմին մասնագիտական վերապատրաստման հնարավորություններով, ինչպես նաև խրախուսել հետազոտական աշխատանքներում երիտասարդ դասախոսների ներգրավվածությունը:
5. Մշակել ազգային և միջազգային բենչմարքինգի արդյունքների արդյունավետ կիրառման մեխանիզմներ:
6. Վերանայել կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացը՝ այլ կրթական ծրագրերի հետ համադրելիությունն ու համահունչությունը ապահովելու նպատակով:
7. Ձևավորել վիրտուալ կրթական միջավայր, որը կարող է ապահովել դասընթացների նյութերի, կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն, որը հնարավորություն կտա նախադրյալներ ստեղծել շահակիցների հետ հաղորդակցության մակարդակի բարձրացման համար:
8. Կրթական ծրագրերի շարունակական կատարելագործումն ապահովելու նպատակով ընդլայնել համեմատական վերլուծության ընթացքում ուսումնասիրվող հաստատությունների կազմը, խթանել գործատուների կողմից տրամադրվող հետադարձ կապի օգտակարությունը հստակեցնելով նրանց կարիքների վերհանման ուղղությունները, ինչպես նաև ապահովել վերլուծությունների արդյունքների կիրառումը որպես կրթական ծրարգրերի բարելավման հիմք:

ՉԱՓԱՆԻՇ3. Առկա են ՄԿԾ-ի որակի ապահովման և շարունակական բարելավման գործընթացների կառարման մեխանիզմներ և ընթացակարգեր:

Չափորոշի ա. *ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում:*	
Հիմքեր	2016-2020 թ.թ. զարգացման ծրագիր, , Որակյալ կրթություն ռազմավարական ուղղություն Հավելված 1 Զեկույց՝ ՌԾ գործողությունների կատարողականի զեկույց 2018-2019 ուս. տարվա գործունեության վերաբերյալ, Հավելված 2 Կրթական ծրագրի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ, Հավելված 3 Հավելված 4, Հեռավար ուսուցում. ուսանողական ֆոկուս խմբերի արդյունքների վերլուծություն Հավելված 5, Գիտական խորհրդի արձանագրություն
Մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին համակարգեր ստեղծելու, դրանք բարելավելու պահանջարկն աճում է ամբողջ աշխարհում, որը փոխկապկցված է հասարակության կրթական կարիքներին համապատասխան որակյալ կրթություն տրամադրելու ռազմավարական նպատակի հետ: Կրթության որակի կառավարման համակարգերը, որոնք ամրագրված են ՄՈՒՀ-ի ռազմավարական փաստաթղթերում և ընթացակարգերում, կառուցված են հիմնականում հետևյալ արժեքների վրա՝ կրթության իրավունքի իրացման հավասարություն, հանրային վստահություն, սոցիալական համախմբվածություն, մրցունակություն: **(Հավելված 1)** Այս խնդրի լուծումը բուհը տեսնում է զարգացման ռազմավարական ծրագրում, որտեղ կարևորվում է մասնագիտական կրթության ծառայությունների որակի շարունակական բարելավումը՝ արտաքին և ներքին շահակիցներին ներգրավելով այդ գործընթացներում: Այս տիրույթի ուսումնասիրման նպատակով բուհում առաջընթացի ցուցիչների հիման վրա ուսումասիրություն է իրականացվել միայն 2018-2019 ուսումնական տարվա գործունեության համար, ինչը թույլ չի տալիս կրթական ծրագրի բարելավման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը համահնչեցնել որակի կառավարման շարունակականության և կայունության սկզբունքների հետ: Գործընթացների իրականացմանը միտված քայլեր արվել են, սակայն չեն գնահատվել և վերլուծվել, թե պլանավորման, իրականացման, ստուգման և բարելավման փուլերում ինչ խնդիրներ են առաջացել, ինչպես ենք հաղթահարվել և գործադրված լուծումները ինչ արդյունքներ են տվել: **(Հավելված 2)** ՄԿԾ-ի իրականացման արդյունավետության բովանդակային վերլուծություններ, այդ թվում՝ ՄԿԾ-ի վերանայումների կամ փոփոխությունների վերաբերյալ ամբողջական գնահատման արդյունքները հավաքագրված և վերլուծված չեն: Հաշվետությունների տեսքով արված ուսումնասիրությունները հանգում են ՄԿԾ-ի առանձին բաղադրիչի (ուսումնական պլան)	

գնահատմանը, գործատուներից ստացված ոչ ֆորմալ հետադարձ կապին, սակայն ամբողջական ՄԿԾ-ի իրականացման մակարդակով համակողմանի վերլուծություններ, որոնք կներառեին վերանայման, իրականացման ու շարունակական բարելաման բոլոր կողմերը, բացակայում են:

Իրականացված բարելավումները վերաբերում են ՄԿԾ-ի ձևաչափային փոփոխություններին, դասընթացի ծրագրի և առարկայական նկարագրերի բովանդակության վերանայմանը, ՄԿԾ-ի և առարկայական վերջնարդյունքների փոխկապակցմանը: Ներքին շահակիցների մեխանիզմներից է դիտարկվել կրթական ծրագրի իրականացման գործընթացի արդյունքների քննարկումը ամբիոնի, ֆակուլտետի և գիտական խորհրդի նիստերում:

Որակի ապահովման քաղաքականություններում ներքին որակի ապահովումը բնութագրվում է որակը՝ որպես համապատասխանություն սահմանված նպատակներին (fit for purpose): Սա ենթադրում է, որ կրթության արդյունքները պետք է բավարարեն շահակիցների սպասումներն ու կարիքները:

ՄՈՒՀ-ում գործող «Կրթական ծրագրի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգը ևս նախատեսում ՄԿԾ բարելավման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը: **(Հավելված 3)**

Սակայն եթե հաշվի առնենք, որ մինչ 2019-2020 ուսումնական տարին բուհում կանոնավոր կերպով և պարբերաբար չեն իրականացվել ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի հարցումներ, իսկ որոշ դեպքերում՝ տվյալներ հավաքագրվել են, սակայն չեն վերլուծվել: Արդյունքում վավեր գործիքակազմով բացահայտված չեն շահակիցների բուն կարիքները, հետևաբար տեսանելի չեն այդ կարիքներին ու խնդրիրներ լուծմանն ուղղված գործողությունների արդյունքները:

Բուհի որակի ապահովման բաժնի նախաձեռնությամբ 2019-2020 ուսումնական տարում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների ուսանողների շրջանում իրականացվել են դասընթացի որակի ապահովման, ռեսուրսներից և ծառայություններից ուսանողների բավարարվածության, ՊԴ կազմի կարիքների գնահատման հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ են անցկացվել հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման վերաբերյալ: (**Հավելված 4)**

Ներքին շահակիցների հետ արված հարցումների արդյունքները ներկայացվել են ամբիոնի, ֆակուլտետի, գիտական խորհրդի նիստերում, սակայն դեռևս չկան վերլուծություններ, թե ինչ մեխանիզմներ են ներդրվել արձանագրված խնդիրները հաղթահարելու համար և արդյոք հետադարձ կապի տվյալները ինչ չափով են օժանդակել իրանակացված վերանայումների ու փոփոխությունների ռազմավարության մշակմանը: (**Հավելված 5)**

Չափորոշիչ ***բ. ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար:***	
Հիմքեր	Հավելված 1, «Լրագրություն» կրթական ծրագրի 2019-2020 ուստարվա

	ուսումնառողների շրջանում անցկացված հարցման արդյունքների վերլուծություն Հավելված 2, «Լրագրություն» մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված պրոֆեսորադասախոսական կազմի հետ հարցման արդյունքների վերլուծություն Հավելված 3, Գործատուների առցանց հարցման արդյոինքների վերլուծություն

ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և վերանայման գործընթացներին հիմնականում մասնակցում են ներքին շահակիցները, իսկ արտաքին շահակիցների մասնակցությունը դեռևս այնքան էլ ակտիվ չէ:

Կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմներից են իրավիճակային ուսումնասիրությունները, հետադարձ կապը պրակտիկաների ղեկավարների հետ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում և կառավարման մարմիններում ընդգրկված, ինչպես նաև պրակտիկայի և կարիերայի բաժնի կողմից կազմակերպվող կլոր սեղան-քննարկումներին մասնակցող գործատուների կարծիքների ուսումնասիրությունը: Բուհում կարևորվում է նաև այլ բուհերի առաջավոր փորձի ուսումնասիրման գործընթացը, որը ևս հիմք է հանդիսանում ՄԿԾ-ների վերանայման համար:

Ներքին և արտաքին շահակիցներից ստացված հետադարձ կապի ներդրումը թույլ է.ՄԿԾ միկրո և մակրո մակարդակում երաշխավորված չէ, որ հավաքագրված տվյալները վերլուծվում և օգտագործվում են կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետ կառավարման համար: Ամբիոնի տարեկան գործունության վերլուծությունները հիմնականում հաշվետվողական բնույթի են, միայն վերջին երկու տարիներին փորձ է արվել ինքնավերլուծության և ինքնագնահատման տեսանկյունից դիտարկել ամբիոնի ուսումնագիտական գործունեության ձեռքբերումներն ու բացթողումները, ինչը թույլ է տվել նաև հստակեցնել մասնագիտական կրթության ոլորտում ներքին և արտաքին մարտահրավերների հակազդման ուղիները:

Հստակ չէ նաև, թե որքանով է ՄՈՒՀ-ին հաջողվել իր գործունեությունը համապատասխանեցնել հասարակության պահանջներին և ոլորտի զարգացման գերակայություններին:

Կարևորելով ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի հիման վրա ՄԿԾ վերանայումների և բարելավումների մեխանիզմը՝ փորձագիտական խումբը իրականացրել է անկախ հետազոտություններ, հարցումներ ու հարցախույզեր, որոնք օգնել են ընդհանրացնել կրթական ծրագրի ներքին և արտաքին շահակիցների բարձրաձայնած խնդիրներն ու բուն կարիքները, բացահայտել գործատուների պահանջները ու ակնկալիքները ապագա մարզական լրագրողներից:

Մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների, շրջանավարտների, դասախոսական կազմի, գործատուների հետ քանական և որակական հետազոտությունների արդյունքների վերլուծությունները ներկայացված են հավելվածներով: **(Հավելված 1, Հավելված 2, Հավելված 3)**

Դրական փաստեր	Բացասական փաստեր
1. Որակի ներքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի առկայություն: 2. Կրթական ծրագրի արտաքին գնահատման ընթացակարգի	5. ՄԿԾ որակի կառավարման, ներքին որակի ապահովման գործընթացների արդյունավետության գնահատման կառուցակարգերի սահմանափակ կիրառումը:

ներդնումը և կիրառումը, որը էականորեն մեծացրել է արտաքին շահակիցների ներգրավումը ՄԿԾ բարելավման գործընթացներում և այն ամրագրել ինստիտուցիոնալ մակարդակում: 3. Վերջին տարում վերանայվել են և դեռևս վերամշակման փուլում են ներքին և արտաքին շահակիցների հետ հարցումների անցկացման կանոնակարգերը: 4. Շահակիցների հետ իրականացվել են հարցումներ, վերլուծվել և դրանց արդյունքների հիման վրա մշակվել բարելավման քայլեր:	6. ՄԿԾ մշտադիտարկումը՝ քանակական և որակական ցուցիչների հիման վրա կամ չի իրականացվել, կամ եթե իրականացվել է, պարբերական բնույթ չի ունեցել: 7. Արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում պասիվ է: 8. ՈՆԱ համակարգը դեռևս չի խթանում շարունակական բարելավումը:
Հիմնական խորհրդատվություն և արձանագրված խնդիրների շտկման առաջարկություններ 1. Բարելավել որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ որդեգրելով բաց և թափանցիկ քննարկումների գործելաոճ: 2. Վերանայել շահակիցների ներգրավման մեխանիզմներն ու մոտեցումները՝ դրանք նպատակաուղղելով նրաց կարիքների պարբերական ուսումնասիրմանը և դրանց բավարարմանը միտված գործողությունների մշակմանը: 3. Շահակիցների ներգրավումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով վերասահմանել նրանց հետ հարաբերությունների մակարդակները և դերակատարությունների տիրույթները: 4. Ներքին և արտաքին շահակիցների հետ անցկացվող պարբերական հարցումները բուհում դարձնել հետադարձ կապի ապահովման մշակույթ:	